№ 231 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 231

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամէրիկա՝ տարեկան 6 դօլլար, Եւրօպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նախ հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԺԻՇԿ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Վերադարձել է և վերսկսել
հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան 9—1 ժամը.
Երեկոյեան 5—7 ժամը.
Վելիամինովսկայա փ. № 13, տ. Սէյլանովի, 3 րդ գիմնազիայի կողքին:
(օ. մ.) տռ. 1156. 10—5

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Հեռագրական Գործակալութիւնը հաղորդում է այսօր, որ Թիւրքահայոց պատրիարք՝ Դուրեան և քաղաքական ժողովը հրաժարական են տուել:

Հեռագիրը առանց մտնելու մանրամասն պատճառների բացատրութեան մէջ, ասում է, որ այդ հրաժարականը արդիւնք է հայկական կոմիտէների հետ ունեցած տարաձայնութեան:

Ովքե՞ր են այդ կոմիտէները, հնչակեան թէ դաշնակցական, և ինչո՞ւ մի ամբողջ ազգի պատրիարքը և քաղաքական ժողովը, այն է ազգային կենտրոնական վարչութիւնը պէտք է հրաժարվեն նրանց հետ ունեցած անհամաձայնութեան պատճառով, այդ, անշուշտ, շուտով կը պարզվի:

Առ այժմ ցաւալի է արձանագրել, որ կուսակցականների յարած խնդիրների և ոտնձգութիւնների պատճառով Թիւրքահայոց ազգային վարչութիւնը մօտ երկու տարի է դատապարտված է անգործունէութեան և այսօր էլ ստիպված է հրաժարական տալ:

Մի՞թէ մեր մէջ հնարաւո՞ր չէ լինելու համերաշխութիւնը. միթէ երկար շարունակվելո՞ւ են եղբայրասպան, ներքին երկպառակութիւնները, որոնք ջլատում, անդամալուծում են ազգի կենսական ոյժերը և թոյլ չեն տալիս, որ համիդեան բռնակալութիւնից ազատվելուց յետոյ հայ ժողովուրդը կարողանայ օգտվել ազատութեան բարիքներից:

Վերջերս Թիւրքահայ թերթերը հաղորդեցին, որ հայկական երկու յեղափոխական կազմակերպութիւններ՝ Հնչակեան և Դաշնակցական, օրինականացրել են իրանց գոյութիւնը և ստացել պետութիւնից արտօնութիւն՝ գոյութիւն ունենալու իբրև լեգալ կազմակերպութիւններ: Իսկ իբրև լեգալ կազմակերպութիւններ, անշուշտ, նրանք պէտք է միայն կուլտուրական գործունէութիւն ունենան և ուրեմն պէտք է նկատվեն իբրև մասնաւոր ընկերութիւններ՝ ունեցող որոշ ծրագիր և ուղղութիւն:

Արդ, կուլտուրական մասնաւոր կազմակերպութիւնները որևէ կերպով չը պէտք է և իրաւունք չունեն միջամտել ազգային վարչութեան գործերին և իրանց միջամտութիւնը հասցնել այնտեղ, որ պատրիարքը և ազգային կենտրոնական վարչութիւնը ստիպված լինեն հրաժարական տալ:

Մենք կը սպասենք լրացուցիչ տեղեկութիւնների մեր վերջնական կարծիքը յայտնելու համար:

Հ. Առաքելեան

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Փարիզ, 16 հոկտեմբերի

Պալատ: Միլլէրանը և Բրիանը պատմում են բանակցութիւնների ընթացքը: Բրիանը ապացուցանում է, որ կառավարութիւնը մինչև վերջին րոպէն գտնվում էր յարաբերութեան մէջ սինդիկատի պատգամաւորների հետ և միևնոյն ժամանակ բանակցում էր երկաթուղային ընկերութիւնների հետ: Մի քանի սոցիալիստներ կշտամբեցին կառավարութեան, որ ճնշում գործ դրեց յօգուտ երկաթուղային ընկերութիւնների: Սոցիալիստ Պիւէկը պնդեց, թէ անհրաժեշտ է մերձեցնել աշխատանքը կապիտալին:

Պատասխանելով սոցիալիստ Վիլմին, մինիստր Բարտուն ասաց, որ ոչ ոք հալածանքի չենթարկվեց գործադուլին մասնակցելուն համար, դատվեցին միայն աշխատանքը ոյժով խանգարողները և երկաթուղային գծերը փչացնողները: Րէյնակի ընկերները մեղադրեցին նրան այն բանում, որ հանդէս չէ գալիս ապօրինի գործողութիւնների դէմ, ինչպէս նա վարվեց Դրէյֆուսի գործում: Րէյնակը պատասխանեց, որ երկաթուղային ծառայողների ձերբակալութիւնների ապօրինութիւնը ապացուցված չէ: Ժօրէսը բուռն կերպով խօսում է մօբիլիզացիայի դէմ, որ արվեց գործադուլը խափանելու նպատակով, առարկում է դաւադրութիւն գոյութիւն ունենալու ենթադրութեան դէմ, ցասումով յարձակվում է Վիվիանի, Միլլէրանի և Բրիանի վրա, յիշեցնելով որ նրանք մի ժամանակ խոստացան բանւորներին՝ կռւել նրանց հետ միասին գործադուլի իրաւունքի համար, յայտնում է, թէ Բրիանը իբրև ընդհանուր գործադուլի նախկին պրօպագանդիստ՝ բարոյական իրաւունք չունի ճնշել գործադուլային շարժումը. պնդում է, որ մինիստրների միջև գոյութիւն ունի տարաձայնութիւն, նախանձելի է նրանցից մի քանիսի հրաժարականը: (Հ. Գ.)

Փարիզ, 17 հոկտեմբերի

Պալատ: Պատասխանելով Ժօրէսին, Բրիանը յայտնում է, որ կաբինէտի մէջ ոչ մի տարաձայնութիւն չը կայ: Բրիանը խօսում է մեծ աղմուկի մէջ և խիստ դարձուածքներով կշտամբում է Ժօրէսին կառավարութեանը վիրաւորելու համար, պնդելով՝ թէ Վիվիանին հրաժարվում է այն պատճառով, որ կօլլէգները ենթակայ են երկաթուղային ընկերութիւնների ազդեցութեան:

Ժօրէսը առարկում է, կանգնելով աթոռի վրա, բայց նրա խօսքերը խեղդվում են աղմուկի մէջ:

Վիվիանին յայտարարում է, որ եթէ համամիտ չը լինէր Բրիանի հետ, այդ մասին կը յայտնէր բացարձակ, սակայն ընդունում է, որ կան րոպէներ, երբ հրաժարվելը հաւասարազօր է փախչելուն (Ծափեր): Բրիանը, յենվելով սոցիալիստական լրագիրների վրա, ապացուցանում է, որ գոյութիւն ունէր երկաթուղագծեր փչացնելու պրօպագանդա, ասում է, որ հասարակութիւնը իրաւունք ունի ապրելու, երկիրը չէ կարող բաց թողնել իր սահմանները. եթէ կառավարութիւնը չունենար օրինական միջոցներ, որպէսզի տէր կանգնէր սահմաններին և երկաթուղիներին, նա առանց երկար բարակ մտածելու կը դիմէր հակաօրինական միջոցների, որովհետև երկրին սպառնում էր անիշխանութիւն: Բրիանը կարծում է, որ փրկվեց երկիրը ամենամեծ վտանգից, որ սպառնում էր վերջին 20 տարիները: (Ծափեր աջից, կենտրոնից և մասամբ ձախից. Մնացած աթոռներում չը տեսնված աղմուկ է): Պալատի չափազանց յուզված դրութեան մէջ նիստը փակվում է և յետաձգվում է կիրակի օրվան:

Երէկ, պալատի նիստը վերջանալուց յետոյ, 200 պատգամաւորներ միաձայն վճռեցին, ի նկատի ունենալով Բրիանի յայտարարութիւնները, առաջարկել հերթական գործերին անցնելու մի պարզ բանաձև: Պատգամաւորները պայմանաւորվեցին չը պաշտպանել Բրիանին, եթէ նա նորից խօսէ:

Մինիստրների խորհրդի այսօրվայ նիստում որոշվեց, որ Բրիանը այսօր պալատում յայտնէ՝ թէ կառավարութիւնը մերժում է հասարակ բանաձևը և կընդունէ միայն այնպիսին, որի մէջ վստահութիւն յայտնված կը լինի:

Պալատում, որ բացվեց մեծ աշխուժութեամբ և համարեա բոլոր պատգամաւորների ներկայութեամբ, անկախ սոցիալիստ Լանդրիից յետոյ, որ հաւանութիւն տուեց Բրիանի ասածներին, և սոցիալիստ-արմատական Դալմէից յետոյ, որ հրաժարվեց ընդունել Բրիանի թէզիսները, խօսում է Բրիանը, որ բացատրում է, թէ երէկ նա կամենում էր ասել, որ կրիտիկական րոպէներին անհրաժեշտութիւն է ներկայանում ձեռք առնել բացառիկ միջոցներ. բարեբաղդաբար, կառավարութեանը ամբողջ ժամանակը աջողվեց մնալ օրինականութեան շրջանակներում: Բրիանը քաղաքականութեան բոլոր հարցերում ցանկանում է յենվել բացառապէս հանրապետական մեծամասնութեան վրա և միշտ էլ նրանից կը պահանջէ լիակատար վստահութիւն: Բրիանը յարակցում է, որ ճգնաժամի ընթացքում կառավարութիւնը ցոյց տուեց ձգտում՝ արդարութեամբ վարվել բոլորի հետ անխտիր, չը դիմելով բռնութեան. «Ես գալիս եմ ձեզ մօտ, վերականգնելով կարգ ու կանոնը փողոցներում միանգամայն լեգալ միջոցներով, առանց արեան կաթիլ անգամ ձեռքիս, և խնդրում եմ միայն վստահութիւն. իսկ եթէ կամենում էք՝ տապալեցէք»:

Ապա պալատը 384 ձայնով ընդդէմ 1-ի մերժում է կառավարութիւնից չընդունված հասարակ բանաձևը: Այս քուէարկութիւնից առաջ Կրիւպին, որ առաջարկել էր անվստահութեան բանաձև, յայտնեց, որ նա երէկ բողոքեց Բրիանի խօսքերի դէմ, որովհետև հասկացաւ նրանց այն մտքով, թէ կառավարութիւնը կամենում է արհամարհել օրինականութիւնը: Կրիւպին յորդորում է Բրիանին հրաժարվել իշխանութիւնից յանուն խաղաղութեան, սակայն իր ճառն աւարտում է, յայտարարելով՝ թէ հաւանում է կառավարութեան գործողութիւնները և յետ է վերցնում իր բանաձևը:

Մեծ իրարանցում:

Ժիւլ Գեդը կշտամբում է Բրիանին բանւորների պահանջները ապօրինի և կամայական միջոցներով ճնշելու մէջ և բանաձև է առաջարկում, պահանջելով ենթարկել Բրիանին պատասխանատուութեան:

Բանաձևը մերժվում է 503 ձայնով ընդդէմ 75-ի. յետոյ 388 ձայնով ընդդէմ 94-ի ընդունվում է այն բանաձևը, որով վստահութիւն է յայտնվում կառավարութեան: (Հ. Գ.)

Փարիզ, 12 հոկտեմբերի

Պատգամաւորների ժողովում վիճաբանութիւններ սկսեցին երկաթուղային գործադուլի մասին: Դիպլօմատիական օթեակում նստած է ռուսաց ֆինանսների մինիստր Վ. Ն. Կօկօվցէվ: Խօսում է արմատական-սոցիալիստ պատգամաւոր Պօլ Կիւնի: Նա պահանջում է աւելացնել երկաթուղային ծառայողների ռոճիկը, թոյլատրելով միևնոյն ժամանակ երկաթուղային ընկերութիւններին բարձրացնել սակագինը:

Նիստը շատ աղմկալի է անցնում:

Փարիզ.—Նիստի ժամանակ սոցիալիստները, նկատելով ոստիկանութեան պրէֆէկտ Լէպինի ներկայութիւնը, ցոյց սարքեցին, պահանջելով որ Լէպինը հեռացվի: Լէպինը հեռացաւ:

Ամբիոնի վրա երևաց Բրիանը: Սոցիալիստները երկարատև օբստրուկցիա են սարքում՝ աղաղակում են, թխկացնում են գրքակալներով և ամէն կերպ խանգարում են խօսել նրան: Բրիանը ճառ է արտասանում, աշխատելով արդարացնել կառավարութեան գործողութիւնները: Հակառակորդներից մէկը, սոցիալիստ Սէլլ, կարդում է մի շարք քաղուածքներ Բրիանի ճառերից, երբ նա յեղափոխականների շարքերումն էր:

— Այդ դուք էք ընդհանուր գործադուլի հայրը,—բացագանչում է նա:

Ապա նա վկայ է բերում Բարտուի, Միլլէրանի և Վիվիանիի կարծիքի վրա, որոնք ընդունում էին, որ երկաթուղային ծառայողները իրաւունք ունեն գործադուլներ սարքել:

— Ինչու՞ այժմ յանցաւոր դարձաւ այն, ինչ դուք ինքներդ քարոզում էիք առաջ,—վերջացնում է նա իր ճառը:

Հակառակորդների յարձակումներին պատասխանում է Բրիան.

— Ձեր ազատութիւնը,—բացագանչում է Բրիան,—բռնակալութիւնն է: Մենք ապացոյցներ ունենք, որ կազմակերպված էր յեղափոխական շարժում, որը վտանգի ենթարկեց ամբողջ երկիրը:

Ահագին տպաւորութիւն գործեց Բրիանի հետևեալ յայտարարութիւնը.

— Մենք քննում ենք միջոցներ, որոնք անհնարին են դարձնելու ապագայում երկաթուղային երթևեկութեան դադարումը: Այդ նախագիծը մենք կառաջարկենք պատգամաւորների ժողովին:

Բրիանը աւարտեց իր ճառը հետևեալ խօսքերով.

— Այն, ինչ ես արեցի երէկ, վտանգի ենթարկելով կեանքս, կանեմ և վաղը:

(«Р. С.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆրանկֆուրտ, 17 հոկտեմբերի

Կայսերական պալատի մինիստրի հեռագիրը. «Այսօր Թագաւոր Կայսրը Օգոստափառ Աղջիկներով բարեհաճեց պատարագ լսել Դարմշտատի ուղղափառ եկեղեցում: Այդտեղ էին նաև մինիստր-նախագահ բարոն Նօրրինգը կնոջ և միսիայի պաշտօնեաների հետ, նաև Նորին Մեծութիւնների շքախմբի անձերը: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 17 հոկտեմբերի

Այսօր, Կայսրի և Կայսրուհի Մարիա Ֆէօդօրօվնայի հրաշքով ազատման օրը՝ գնացքի խորտակման ժամանակ, մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներում, կառավարական հաստատութիւններում և բոլոր զօրամասերում կատարվեցին գոհաբանական մաղթանքներ:

«Русское Знамя»-ի խմբագրի դէմ հոկտեմբերի 17-ի համարում զինւորական մինիստրութեան ձեռնարկութիւնների մասին տեղեկութիւններ հաղորդելու համար յարուցվում է դատական գործ քր. պատժ. 111-րդ յօդուածով:

Արգելք դրվեց «Рѣчь»-ի հոկտեմբերի 17-ի համարի վրա. խմբագիրը պատասխանատուութեան է ենթարկվում 1034-րդ յօդուածի 3-րդ կէտով: (Հ. Գ.)

Օդեսսա, 17 հոկտեմբերի

Բացվեց առաջինը Ռուսաստանում օդագնացութեան գործիչների համագումարը: Նախագահ ընտրվեց Օդեսսայի աէրօկլուբի նախագահ Անատրան: Ուղարկվեցին շնորհաւորական հեռագիրներ Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչին և ներքին գործերի մինիստրին, խնդրելով առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել ամենահաւատարիմ զգացմունքներ: Համագումարը կը տևէ չորս օր: (Հ. Գ.)

Հէլսինգֆօրս, 16 հոկտեմբերի

Արձակված սէյմի պատգամաւորներից շատերը նորից իրանց թեկնածութիւնը չեն դնում. նրանց թւումն են սենատորներ Էլտը, Կօսկինէնը և ուրիշները: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 16 հոկտեմբերի

«Новое Время» լրագրի խմբագրի դէմ քր. պատժ. 111-րդ յօդուածով յարուցվեց դատական գործ այսօրվայ համարում զինւորական մինիստրութեան ձեռնարկութիւնների մասին տեղեկութիւններ հաղորդելու համար: (Հ.Գ.)

Բէլգրադ, 16 հոկտեմբերի

Գահաժառանգը գիշերն հանգիստ անցրեց: Զարկերակն 108, տաքութիւնը 39,1°, շնչառութիւնը 24: (Հ. Գ.)

Բէլգրադ, 17 հոկտեմբերի

Գահաժառանգը գիշերը հանգիստ անցրեց. հիւանդը իրան լաւ է զգում. տաքութիւնը 38,4° է: (Հ. Գ.)

Սօֆիա, 16 հոկտեմբերի

Ֆերդինանդը բացեց ազգային ժողովի նստաշրջանը գահական ճառով, որի մէջ ասաց. «Բուլղարիայի նոր կացութիւնը և անկախութիւն յայտարարելը Թագաւորի վրա պարտաւորութիւն դրին այցելութիւններ գործել մի քանի պետութիւնների ներկայացուցիչներին: Կառավարութիւնը համարում էր այդ այցելութիւնները, որոնք դեռ չեն վերջացել, ոչ միայն քաղաքավարութեան գործեր, այլ և նրանց տալիս էր քաղաքական նշանակութիւն: Մեծ ազատարարուհու՝ Ֆրանսիայի մայրաքաղաքում, առաջադիմութեան ու ազատութեան այդ մեծ կենտրոնավայրում, յանձին ինձ ողջունեցին Բուլղարիային և նրա ձեռք բերած աջողութիւնները: Ես պէտք է ընդգծեմ այն հանդիսաւոր ընդունելութիւնը, որ ցոյց տուին ինձ հարևան պետութեան մայրաքաղաքում, և Ցետինիէում հանդիպած փայլուն ու սրտագին ընդունելութիւնը: Բուլղարիան գեղեցիկ յարաբերութիւններ է պահպանում բոլոր մեծ պետութիւնների հետ»:

Այնուհետև ճառը յիշում է կաբինէտի վերակազմութեան մասին. կառավարութեան ծրագիրը մնում է առանց փոփոխութեան:

Սօբրանիէի նախագահ ընտրվեց Օրախովիչը: (Հ. Գ.)

Բերլին, 17 հոկտեմբերի

Ոստիկանութեան տեղեկութիւնների համաձայն երէկ երեկոյեան Բերլինի հիւսիսային մասում մի ֆիրմայի գործակատարներին պաշտօնից արձակելու առիթով տեղի ունեցաւ ամբոխի մեծ համախմբում: Ծագած անկարգութիւնները շուտով ապստամբութեան կերպարանք ընդունեցին: Տասնեակ ոստիկաններ ջարդուածքներ ստացան քարերից, մօտակայ փողոցների լապտերները փշրվեցին քարերով: Ոստիկանութիւնը ստիպված եղաւ զէնքի դիմել: «Ցրել» առաջարկին՝ ամբոխը պատասխանեց աղաղակով, սուլոցով և հայհոյանքով: Ամբոխի միջից կրակեցին մի անգամ: Անկարգութիւնները շարունակվեցին մինչև առաւօտեան ժամը 3-ը: Ձերբակալվեցին 12 մարդ, որոնց թւում կային 2 կին: Ոստիկանութիւնը կարծում է, որ անկարգութիւնների մէջ մեծ դեր էին խաղում կազմակերպված բանւորները: (Հ. Գ.)

Զագրեբ, 16 հոկտեմբերի

Խորվատական սէյմի ընտրութիւններից երևում է, որ կօալիցիան արդէն չէ կազմում մեծամասնութիւն, բայց բանի աջողութիւնները նոյնպէս մեծ չեն: (Հ. Գ.)

Վիեննա, 16 հոկտեմբերի

«Ֆրեմդենբլատտը» հաստատում է այն տեղեկութիւնը, թէ կոմս Բէրդօլդը ընտանեկան հանգամանքների պատճառով խնդրել էր յետ կանչել իրան Պետերբուրգից և այժմ էլ պնդում է իր խնդիրը: Դեսպանի փոփոխութիւն բայց և այնպէս մօտիկ ապագայում տեղի չի ունենայ և Բէրդօլդը նոյեմբերի վերջերին կը վերադառնայ Պետերբուրգ և ձմեռը կանցկացնէ այնտեղ:

«Կոր. Բիւրօյին» հաղորդում են Ցետինիէից, որ Սալօնիկից և Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնները Թիւրքչեռնօգորական սահմանագլխին պատահած դէպքերի մասին սխալ են. մաուզերներով զինված են ոչ միայն ալբանացիները, այլ և Նօվօ-Բազարի սանջակի մահմէդականները և Չերնօգորիային սահմանակից տեղերի ազգաբնակութիւնը: Երէկ նորից հրացանաձգութիւն է տեղի ունեցել, որովհետև ալբանացիները փորձել են սահմանն անցնել: (Հ. Գ.)

Փարիզ, 16 հոկտեմբերի

Իր հաւատարմագրերը Ֆալիէրին յանձնելու ժամանակ Ֆօն-Շէնը դիմեց նրան մի ընդարձակ ճառով, որով ասաց՝ թէ, համաձայն Կայսրի ցուցումների, նրա միսիան նպատակ ունի աջակցել և ամրապնդել Ֆրանսիայի և

Գերմանիայի միջև գոյութիւն ունեցող բարի յարաբերութիւնները. կայսրը յանձնարարել է նրան լինել թարգման յարգանքի ու համակրանքի զգացմանց առ նախագահը և ցանկանալ Ֆրանսիային բարգաւաճում։ Ֆալիէրը պատասխանեց, որ երկու պետութիւնների միջև բարի յարաբերութիւններ պահպանելու ցանկութիւնը համապատասխանում է հանրապետութեան կառավարութեան մտադրութիւններին։ Ֆալիէրը յանձնարարեց դեսպանին հաղորդել կայսրին ամենալաւագոյն բարեմաղթութիւններ և շնորհակալիք։ Պաշտօնական ընդունելութիւնից յետոյ Ֆալիէրը ֆօն-Շէնի հետ ունեցաւ մտերմական խօսակցութիւն, յայտնելով թէ դեսպանը Ֆրանսիայում կը հանդիպի լիակատար աջակցութեան իր նախորդի նման։ (Հ. Գ.)

Մօնտէվիդէօ, 16 նոյեմբերի

Ուրագվայում երկիւղ կայ յեղափոխութեան բռնկման։ Չորս կողմից խռնվում են զինված յեղափոխականներ. հեռագրաթելերը կտրտել են։ Կառավարութիւնը զօրքեր է ուղարկում դէպի սահմանը, կատարվում են բազմաթիւ ձերբակալութիւններ։ (Հ. Գ.)

Խարբին, 16 նոյեմբերի

Վաղը սկսվում են չինական զօրքերի վարժութիւնները Ջանտուֆուլի շրջակայքում։ Լուրերին նայած, վարժութիւններին ներկայ է լինելու զինուորական մինիստրը։ (Հ. Գ.)

Բագու, 17 նոյեմբերի

Ինն պարսիկ աւազակներ յարձակվեցին Բարվէշլի գիւղի վրա (Լէնքորանի գաւառ) և քշեցին դէպի Պարսկաստան մի քանի ձիեր և ուղտեր, 4,000 րուբլի արժողութեամբ։ (Հ. Գ.)

Փարիզ, 12 դեկտեմբերի։ Ոստիկանութիւնը ձերբակալեց երկու ուսանողների, Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտէտի ուսանողների, որոնք պտրում են Գէորգ և Արշակ Բաղդադեանց ազգանուններով, կեղծ դրամ տարածելու համար։ Ուսանողներն ասացին, որ նրանք այդ դրամները ստացել են մի ոմն Գէորգ Նազարեանից։ Խուզարկութիւնը վերջինի բնակարանում երևան հանեց լաւ սարքված քիմիական լաբորատորիա։ Նազարեանցի կինը բացատրեց, որ իր ամուսինը «էկսպրօպրիացիայի» համար Պետերբուրգում դատապարտված էր մահվան պատժի, ապա ներումն ստացաւ և դատապարտվեց տաժանակիր աշխատանքների, որտեղից փախաւ։ Փարիզում, նրա խօսքով, նրա մարդը քիմիա էր աւանդում իր հայրենակիցներին, ուսանողներին։ Ոստիկանութիւնը գտաւ մի քանի առարկաներ, որոնք կարող էին, նրա կարծիքով, պէտք գալ ռումբեր պատրաստելու համար։ Նազարեանցը յայտնեց, որ ինքը բժշկական-ֆակուլտէտի ուսանող է, 27 տարեկան և պատկանում է յեղափոխական կազմակերպութեան։ Նա, սակայն, հերքում է դրամանենգութիւնը։ («Р. С.»)

Պետերբուրգ.—Հաղորդում են, որ պատգամաւոր Լավրինովսկին նշանակվում է Կիէվի փոխ-նահանգապետ։

Սենատորներ Գիւլչինսկին և Նէյդգարդտի րէվիզիան աւարտելը բացատրում են նրանով, որ բարձր իշխանութիւնները չեն ցանկացել, որպէսզի Պետական Դուման նոր վարկաբեկող փաստեր ունենայ իշխանութիւնների գործողութիւնների մասին։

Նորից լուրեր են պտտում, թէ երբ կազմվելու է ժողովրդական առողջապահութեան մինիստրութիւն, որի գլուխ կանգնելու է պրոֆեսոր Րէյնը։ («Б.»)

Նովոչերկասկ.—Ոմն Կարնէենկին կողոպտելու համար կախաղան բարձրացրին 4 հոգու զինուորական դատարանի վճռով։

Տօմսկ.—Ինքնասպանութիւն գործեց ինտենդանտական պաշտօնեայ փոխ-գնդապետ Միլեակովը։

Պետերբուրգ.—«Р. Сл.»-ի թղթակցի հետ խօսելիս սինոդի անդամներից մինը յայտնեց, որ օբէր-պրօկուրոր Լուկիանովը, աւելի քան Պոբէդօնոսցէվը, ճնշում է սինոդը. Նրա օրով սինոդը կորցրեց իր ինքնուրոյնութիւնը։

«Новое Время»-ն յայտնում է, որ «Р. Сл.»-ի խմբագրի ձերբակալութիւնը մի աւելորդ անգամ ապացուցում է մամուլի իրաւազրկութիւնը։ («Б.»)

Վարշավա.—Հաղորդում են, որ սենատոր Նէյդգարդտը ստանում է բարձր պաշտօն ծայրագաւառում։ («Б.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 16 նոյեմբերի

Հայոց պատրիարքը և պատրիարքարանի խորհրդի անդամները հրաժարական տուեցին հայկական կուսակցութիւնների հետ տարաձայնութիւններ ունենալու պատճառով։

Սամսոնի մօտերը ջրասոյզ եղաւ «Հուրրիէթ» շոգենաւը, որ տանում էր 300 զինուոր և 150 ուխտաւորներ։ Ճանապարհորդների մեծ մասը ազատվել է խեղդվելուց։

Մօնաստիրի վիլայէթում տեղի ունեցան երկու արիւնահեղ կռիւներ թիւրքաց զօրքերի և ալբանացիների միջև։ Պուտոլ գիւղում գտնվեց ռումբերի պահեստ։ (Հ. Գ.)

Կ. Պոլիս.—Անգլիան վստահեցնում է, որ Պարսկաստանի բաժանման մասին նա չէ մտածում, այլ պաշտպանում է միայն առևտուրը Բուշիր-Սպահան ճանապարհի վրա։ Դէպի սահմանն են ուղարկվում թիւրքական զօրախմբեր։ Թիւրքիան յայտնում է, որ ցանկանում է պաշտպանել պարսիկներին։

Սուլթանը մեկնեց Ադրիանուպօլիս՝ ներկայ լինելու զօրախաղերին։

Կ. Պոլիս.—Անգլիական դեսպանատունը բողոքեց այն վիրաւորական դարձուածքների համար, որ ուղղեցին կիրակի օրը Անգլիայի հասցէին ժողովրդական միտինգին։

Ֆրանսիական դեսպան Բոմպարը մեկնեց՝ ի նկատի ունենալով որ բողոք է լսվում փոխառութեան դէմ Գերմանիայում, որի մասին արդէն յայտարարված է պաշտօնապէս։ («Б.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թէհրան, 17 նոյեմբերի

Տեղի ունեցաւ կաբինէտի մասնակի փոփոխութիւն. Մուստաֆա-ուլ-Մէմալիքի նախագահութեամբ՝ ներքին գործերի մինիստր՝ պրինց Էյն-ուդ-Դովլէ, զինուորական՝ Ֆարման-Ֆարմա, արդարադատութեան՝ Մուխպէրադ-ուս-Սալթանէ, ֆինանսների՝ Սանի-ուդ-Դովլէ, արտաքին գործերի մինիստր՝ Նախկին Նավաբը։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 16 նոյեմբերի

Քաղաքում ցրւում են պարսիկ յեղափոխականների թռուցիկները, որոնցով մասսաներին յորդորվում է կռւի դուրս գալ և կողոպտել հարուստ դասակարգերին։ Թռուցիկները տպված են Էնզելիում յեղափոխական կօմիտէի տպարանում։ Ազգաբնակութիւնը յուզված է Թաղի-զադէի կուսակցութեան ագիտացիայից և գեներալ-նահանգապետի անգործութիւնից։

Րահիմ-խանի որդի Բեօյուկ-խանը, նոր ուժեր ժողովելով, մօտենում է Ահարին։ (Հ. Գ.)

Լոնդոն.—Պարսկաստանի բանակցութիւնները Անգլիայի հետ փոխառութեան մասին՝ առաջ են գնում աջողութեամբ։ Կնքվելու է $10^{0}/_{0}$-ին փոխառութիւն $12^{1}/_{2}$ միլիօն ֆունտ գումարի և երաշխաւորվելու է հարաւային մաքսատների եկամուտներով։

«Times»-ը զայրոյթ է յայտնում Պարսկաստանի պատասխանի դէմ անգլիական նօտայի առիթով և սպառնալիքներ է ուղղում Պարսկաստանի հասցէին։ «D. N.»-ը, ընդհակառակն, պահանջում է չը միջամտել պարսկական գործերին և խորհուրդ է տալիս յետ կանչել օտարազգի զօրքերին Պարսկաստանից։ («Б.»)

Բերլին.—Պարսկական նոր խնամակալը սպասվում է այստեղ արտաքին գործերի մինիստրի հետ խօսակցելու համար փոխառութեան կոնցէսիաների մասին։ («Б.»)

ՊՈՐՏՈՒԳԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Լիսաբոն, 17 նոյեմբերի

Ձերբակալվեց նախկին մինիստր-նախագահ Ֆրանկօն։ (Հ. Գ.)

Ֆրանսիական կառավարութիւնը տուեց արդէն իր համաձայնութիւնը Անգլիայի առաջարկութեանը՝ ընդունել ներկայ րօպէին ժամանակաւոր կառավարութիւն Պորտուգալիայում, յետաձգելով վերջնական պաշտօնական ընդունելութիւնը մինչև ժամանակաւոր կառավարութեանը հաւանութիւն կը տայ ժողովրդական ձայնատւութիւնը։

Ժամանակաւոր կառավարութիւնը 1911 թւի յունվարին նշանակեց ազգային ժողովի ընդհանուր ընտրութիւնները, որը պէտք է մշակէ նոր սահմանադրութիւնը։ Ընտրութիւններին կը ղեկավարէ հանրապետական այն կօմիտէն, որը կազմակերպեց յեղափոխութիւնը։

Ժամանակաւոր կառավարութիւնը, խնայողութիւն անելու նպատակով, վերացրեց դեսպանների և լիազօր մինիստրների պաշտօնները, փոխարինելով նրանց դիպլօմատիական գործակալներով։

Հրատարակվեցին մի շարք հրովարտակներ դպրոցական կրթութեան և դպրոցների մասին։ Վերցվում է կրօնագիտութեան դասատւութիւնը։ Ուսում առնողները տեղեկութիւններ կը ստանան քաղաքական իրաւունքների և բոլոր երկիրների պետական կազմակերպութեան մասին։ Ինչ վերաբերում է միաբանութիւնների գոյութիւն ունեցող դպրոցներին, նրանք աշխարհական են յայտարարվում։

Առանձին շրջաբերականով արդարադատութեան մինիստրը հրամանագրեց դատաւորներին դատի ենթարկել այն հոգևորականներին, որոնք իրանց ճառերում յարձակում կը գործեն հանրապետական րէժիմի վրա։

Պապի դեսպանը հեռացաւ Պորտուգալիայից, թողնելով որպէս գործերի հաւատարմատար Ալօիզա Մացէլլային։ Մամուլը պահանջում է աքսորել նրան երկրից։

Ներքին գործերի մինիստր Ալմէյդա մշակեց եկեղեցին պետութիւնից անջատելու նախագիծ։

Գրաւած միաբանական գոյքերի մի մասը կը գործադրվի հոգևորականութեան ապահովութեան վրա։

Պորտուգալիայի հնագոյն համալսարանում, Կօիմբրում, կառավարութեան հրովարտակով փակվեց աստուածաբանական ֆակուլտէտը։

Ֆինանսների մինիստրը հաղորդեց, որ Պորտուգալիայի արտաքին պարտքը կազմում է 41.250,000 ֆունտ ստէրլինգ։ («Р.С.»)

ՈՒՐԱԳԱՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Հռոմ.—Ուրագանից Նէապօլի շրջականերում վնասվեցին գլխաւորապէս Ամալֆիի ափերը։ Սետարա աւանը համարեա ոչնչացված է։ Սպանվեցին մօտ 200 մարդ։ Հեռագրական հաղորդակցութեան ընդհատումը դժուարեցնում է ճիշդ տեղեկութիւնների ստացումը դժբաղդութեան չափերի մասին։

Նէապօլ.—Վնասված տեղերից ստացված վերջին տեղեկութիւնները հաստատում են Ամալֆիի ափերի վրա տեղի ունեցած սարսափելի աւերածութիւնների լուրերը։ 200 հոգուց աւելի է միմիայն Սետարա փոքրիկ քաղաքում սպանվածների թիւը։ Իսկիա կղզին քիչ վնասվեց։ Դժբաղդութեան տեղը ուղարկված են սանիտարական խմբեր։ Այնտեղ ճանապարհ ընկան և երկու մինիստրները։ Սպասում են նոյնպէս թագաւորի գալստեան։ («Р. В.»)

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 27 սեպտեմբերի

Գործի և աշխատութեան եղանակն է այժմ դաշտային Կիլիկիոյ շատ մը տեղերու համար, ամառուայ անառողջ տօթերէն վերջ։

Ընդհանուր ոգևորութիւն մը կը տիրէ ամենուրեք, ուր քիչ շատ բամպակի բերքը յաջող է և ծուծման առատ,—Չուքուր-օվայի (Ադանայի դաշտը) կարևոր երկրագործական արտադրութիւնները։

Ինչպէս ամենուրեք, հոս ալ բամպակի գնի բարձրութիւնը այս տարի նոր շարժում մը աւելի դրաւ գործերու մէջ, և կանոնաւոր ու սիստեմատիկ մշակութեամբ մը կը խոստանայ ըլլալ գլխաւորը Կիլիկիոյ հարստութեան կարևոր աղբիւրներէն։

Ցանուող և մշակուած տեսակներէն նախընտրուած են այնպիսիները, որոնց բամպակը՝ ինչպէս կըլլայ Եգիպտոս՝ չի վերցուիր տունկին վրայէն իսկ։ Եւ որովհետև այս երանելի երկրին մէջ բաւականաչափ աշխատաւոր ձեռք կը պակսի... չորցած ըլլալնուն, նախամեծար համարուած են այն տեսակներ, որոնց կապսիլը մէկ անգամով կը վերցնեն և ապա վերջէն տուներու մէջ կաշխատին բամբակը բաժնել անկէ,—կանանց և փոքրերու աշխատութիւն մը պարզապէս։

Ադանայի մէջ և շրջակայքը գործերու ընդհանուր ոգևորութիւն մը կը տիրէ այս պահուս, որովհետև բացի երկրագործական բերքերէն՝ կան նաև մէկ կողմէն Բաղդադի երկաթուղեաց գիծերուն շինութեանց աշխատութիւնները, որ Վիլհէլմ կայսեր հպատակներէն ջոկեր մը մեր կողմերը խուժել տուած է, շինութեանց վերսկսումը՝ անցեալ տարուայ կրակ ու քանդումներէն վերջ, առևտրական վերակենդանութիւն մը, գործերու առատութիւնը և ամենուն հակառակ՝ գործաւորներու ու աշխատաւորներու քիչութիւնը, որ պատճառ տուած է օրօրչէքներու և վարձատրութեանց սպասուածէն անակնկալ բարձրացումներու։ Գործերու համեմատութեամբ մարդու սով։

Ապահովութիւնն ալ գէշ չէ։ Կուսակալ Ջէմալ-բէյը փութկոտութեամբ կը հսկէ որ մոլեռանդ տարրերը գլուխ չբարձրացնեն։ Այս դժբաղդ երկրին ներկայ համեմատական հանդարտութիւնը, որոշ կարելի է ըսել, իր կորովի և խիստ կառավարութեանը պարտական ենք։ Իսլամ հասարակութիւնը շատ գոհ չէ բնականաբար կուսակալ բէյի այս վարմունքէն. բայց որովհետև կամք մը կը տեսնէ իր դէմ, կը լռէ ու կը համակերպի։

Այսպէս ալ է, առայժմ, մեր երկրին բոլոր կողմերը։ Անդորրութիւնը և ապահովութիւնը կապուած են բացարձակապէս իշխող ղեկավար պաշտօնէութեան անկեղծութեան և կորովին։ Ուր որ պակաս է կառավարութեան քով այս անհրաժեշտ յատկութիւնները, հոն կացութիւնը, աւելի կամ պակաս, միևնոյն կերպով կը շարունակուի ինչպէս առաջները։ Հոն «սահմանադրութիւն», «ազատութիւն», «արդարութիւն» բառերն յաճախ հեգնանք մըն են։

Մեր երկրին մէջ, մինչև բնակիչներէն ոմանց՝ սահմանադրական կարգերուն ընտելացումը, անոր գործադրութիւնը կախուած պիտի ըլլայ պետական բարձր պաշտօնէութենէ։ Երբեմն նոյն իսկ ուժով և բռնի արդարութիւն մը, անսաստներուն դէմ անողոք և խիստ պատիժ մը և օրէնքին անխտիր և անվերապահ տիրապետութիւնը՝ վեր ամեն նկատումներէ—ինչ ալ ըլլան անոնք—ահա ինչ որ միայն պիտի կարողանան պահպանել կարգը Թիւրքիայի մէջ, ապահովել կեանքն ու աշխատութիւնը խաղաղ բնակչութեան և ապահովել—թէև յամր—երկրին յառաջդիմութիւնը՝ հաստատուն և տևական եղանակով մը։

Այս ընդհանուր տեսակէտներէն դատելով, Ադանայի կուսակալը սահմանադրական վարչութեան աչքի զարնող կարևոր և առաջնակարգ պաշտօնատարներէն է և երիտասարդ թիւրքերու ցայտուն դէմքերէն։

Անցեալ տարի, երբ կառավարութիւնը և իր ներկայացուցիչները ամենուստ շուարած կը մնային Ջարդերու պատճառով պատերազմական ատեանին վճիռովը մահուան դատապարտուած ոճրագործ իսլամներու պատիժին գործադրութեան համար, և խնդիրը այս վարանումէն ծանր և անհաշուելի հետևանքներու պիտի կրնար յարգիլ, Ջէմալ-բէյը, որ միանգամայն բարձրաստիճան զինուորական մըն է, համազգեստը հագած, զօրքը շուրջը, ձիու մը վրայ նստելով, հանդարտ և պաղարիւն, իր աչքին առաջ և անմիջական հսկողութեան ներքեւ իսկ գործադրել տուաւ կախաղաններու պատիժը, որ ապա բոլոր վիլայէթին մէջ մօտ յիսունի հասաւ։ Պատերազմական ատեանի նոյն վճիռները, որքան ալ պակասաւոր և անբաւական, որքան ալ Ջարդի ճշմարիտ դրդիչները դուրս ձգուած, սակայն իրենց տեսակին մէջ աննախընթաց՝ ահագին տպաւորութիւն մը ընելու կոչուած էին, մինչ այն՝ սանձարձակ աւերելու և սպանելու վարժուած տարրերուն դէմ, որոնք կամայակամայ, քաղաքակրթութեան և մարդկային կեանքի յարգանքին հրաւիրելու պէտքը անհրաժեշտ կը դառնար։

Ապահովութիւնը կայ, իրաւ է, և կուսակալ բէյը, առանց այս ու այն ազգին միայն ի նպաստ՝ անոր տեւականութեանը կը հսկէ իր անձնական կորովովը. սակայն շատ մը արկածեալ տեղերու բնակչութիւնը չի համարձակիր դեռ իր տեղերը դառնալու։ Թերևս անտեղի երկիւղ։ Բայց իր բնազդէն ներշնչուած տեսակ մը անվստահութիւն զինք չի քաշըլեր, սիրտին խորը բոյն դրած այդ զգացումը զինք կը կաշկանդէ պարզապէս։

Կառավարական քիչ մը աւելի անկեղծ ու անվերապահ քաղաքականութիւն մը՝ և մանաւանդ արդարութեան և օրէնքի շուտափոյթ ու անաչառ գործադրութիւն մը, այդ կենսատու վստահութիւնը պիտի կրնային ծնեցնել, կը կարծենք, այդ դժբաղդներուն մէջ, որ իրենց՝ թէև աւեր-աւերակ՝ օջախներէն հեռու պիտի դատապարտուին մնալու մինչ խեղճ և օգնութեան կարօտ։ Ու անդին, իրենց անտէր և անպաշտպան թողած մուլքն ու հողերը ուրիշներէ յափշտակուելու, խլացուելու վտանգին մէջ պիտի ըլլան, առեն մը, երբ այս կողմեր, օրըստօրէ հողերը անհամեմատ բարձր արժէք մը կունենան և կը կազմեն գաւառին հարստութեան հիմը։

Այսպէս, օրինակի համար, իրենց տեղերը չեն վերադարձած Չոր-Մարզուանի քով Օջակլըի և քիչ մը հեռուն, Նաջարլուի բնակիչները, հակառակ կառավարական սպառնալիքներուն, և իրենց այս վիճակէն տիրացած են անհնարին նեղութեանց և թշուառութեանց։ Մի-Նա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ՋԱԼԽՈՒՇԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Նոր-Նախիջևան, 11 նոյեմբերի

Երէկ ես հեռագրեցի «Մշակին», այսօր շարունակում եմ, որ նոյմ. 10-ին, կիրակի օրը, շքեղ կերպով տօնվեց Նոր-Նախիջևանի վաճառականական ակումբի դահլիճում Գրիգոր Ջալխուշեանի փաստաբանական և հասարակական գործունէութեան 25-ամեայ յոբելեանը։

Ուրեմն այն օրից, երբ նա ուսանողական նստարանը նոր թողած՝ իր առաջին քայլն է արել մեր ամեն ինչ կլանող, մեռցնող քաղքենի, մերկանտիլ կեանքի ասպարէզում, միաժամանակ նա սկսել է և իր քաղաքացիական պարտքի կատարելը։

Հազուագիւտ օրինակ, արժանի իբր օրինակ ծառայելու, այն ուսանող սերնդին, որի աւարտելուն և վերադարձին է սպասում բազմակարօտ հայ ժողովուրդը։

Հասարակական գործունէութեան 25-ամեակներ առանց այն էլ շատ քիչ են լինում, բայց մի այնպիսի հազուագիւտ բազմակողմանի և բեղմնաւոր գործունէութիւն, որպիսին ցոյց է տուել Գր. Ջալխուշեանը, արդարև միմիայն զարմանքի, հիացմունքի է արժանի։

Ահա ինչու այդքան սրտագին էր, ուրախ և անկեղծ այդ յոբելեանի տօնը։

Ահա ինչու փառքով պսակվեց մի սիրտ, մի գլուխ, մի միտք, մի եռանդ, որ այնպէս նուիրված էր իր ազգի բոլոր հասարակական գործերին։

Մեզնում լինել հասարակական գործիչ՝ կը նշանակէ վերցնել իր վրա մի անշնորհակալ դեր, ընտրել մի փշոտ ու տատասկոտ ճանապարհ։

Լաւ է, եթէ դա գործ ունենար մի փոքր ի շատէ ինքնաճանաչ հասարակութեան հետ. լաւ է, եթէ հայերից մէկը գտնվեց, որին դու դիմելու րօպէին ոչ թէ մուռթը կախ քցեց և անիծեց այն րօպէն, որ քեզ պատահեց և շատերի նման մի կեղծ ժպիտով, մի յիմար սրախօսութեամբ վարագուրելով իր քար սիրտը, իր անտանելի ժլատութիւնը՝ մի քանի գրոշ սեցրեց քեզ, այլ գիտակցելով իր պարտքը՝ բռնեց բարեկամաբար քո ձեռքը և ասաց.

— Պարոն, դուք վերցրել էք ձեր ուսերի վրա բարոյական մի բեռ, որը հաւասարապէս պէտք է ծանրանար մեզնից ամեն մէկի ուսերի վրա. բայց որովհետև ես թոյլ գտնվեցի... ես անպատրաստ գտնվեցի իմ պարտքը կատարելու. և որովհետև այդ կատարել յանձն առաք դուք, թոյլ տուէք ուրեմն սեղմել ձեր ձեռքը և ասել՝ հազար շնորհակալութիւն։

Այդպիսի բան մեզ հայերիս մօտ հազիւ երբևիցէ նկատված լինի։ Անտարբերութիւն, հեգնանք, ծաղր և շատ անգամ փշեայ պսակ—ահա վարձը իր վաստակաւոր մշակի, որը պէտք է մի դիւթական գաւազան ունենալու չափ բարոյական ոյժ ունենայ իր ձեռքին, ինչպէս գազանների անվեհեր զսպիչը, որի առաջ խոնարհվում են առիւծները և հզօր վագրերը, որպէսզի մարդ գազանը խոնարհվի սուրբ գաղափարի յաղթանակի առաջ։

Շատերն են հրաւիրված և քչերը ընտրված։

Մի քանի ժամանակ առաջ Բագւում վախճանվեց Բօղդան Մ. Դօլուխանեանը. հասարակական բոլոր խաւերը լացին և ամենքը միաբերան խոստովանեցին, որ նրա մահվամբ հասարակական ասպարէզից պակասեց մի խոշոր գործիչ, մի իսկական ժողովրդի հայր... Բայց մնաց և հազիւ լինի մէկը որ փոխարինի նրան, այդ ֆանատիկոս գործչին... Եւ սա շատ հասկանալի է... Մարդը կոչում պիտի զգայ իր մէջ, հաւատ դէպի իր գործը։ Ես նրանցից չեմ, որ նրա գործունէութիւնը վերագրեմ նրա բարձրագոյն կրթութեան. ոչ. Բագուն ունի հարիւրաւոր բարձրագոյն կրթութեան տէր երիտասարդութիւն, բայց այսօր նրա Մարդասիրական Ընկերութեան ընդհանուր ժողովին հազիւ է ժողովվում մի 50 մարդ։ Մինչդեռ 25 տարի առաջ՝ կրթվածների թիւն այնտեղ հազիւ լինէր 10—12, և որտեղ այն ժամանակի հայերի թիւը այժմեանից 3—4 անգամ պակաս, նոյն ընկերութեան ժողովներին 70—75 մարդ էր լինում։ Մարդը պէտք է ունենայ սիրտ, ցաւակցող սիրտ. թէ չէ, ահա ունենք մենք մի քանի միլիոնատէր բարձր կրթութիւն ստացած հայեր, որոնց համար գոյութիւն չունի և ոչ մի ազգային ցաւ, որոնք գուցէ և անիծում են, որ հայի ազգանուն են կրում և հայ են ծնվել։

Մի օր մի ճաշկերոյթի ժամանակ Բօղդան Մօխսէևիչը ասաց. «Երբ ես երիտասարդ էի» և այլն. ես նրա խօսքը կտրելով ասացի. «Սուտ է, Բ. Մօխսէևիչը երբէք երիտասարդ չէ եղել. 89 թւից ես աչք եմ բացել և նրան միշտ այնպէս ծեր եմ տեսել»... Նա հասկացաւ և ժպտաց. իրօք երբէք ես նրան ծեր չեմ տեսել. հասարակական գործը սրտին մօտ ընդունողի եռանդի առաջ յոգնածութիւն չը կայ։

Գ. Ջալխուշեան միակն է այստեղ, որ այդքան բազմակողմանի, լայն ծաւալով գործունէութիւն ունի. և պէտք է զարմանալ. որտեղից է մարդը այդքան ժամանակ գտնում։

Երբ յոբելեարը յայտնվեց դահլիճում, բարձրացաւ ծափահարութիւնների դղրդոց, որից յետոյ Սուրբ-խաչ վանքի վանահայր Վահան վարդապետը օրհնութեամբ բացեց հանդէսը։

Առաջինը կարդացվեց Վեհափառ Հայրապետի կոնդակը։ Կաթողիկոսը օրհնում է յոբելեարի գրական-հասարակական գործունէութիւնը, ցանկանալով և բարեմաղթելով նոր եռանդ և առողջութիւն նոյնը շարունակելու յօգուտ բազմակարօտ հայ ազգի։ Վեհափառի յիշատակած՝ յոբելեարի գրական գործունէութիւնը հետևեալն է. „Армянская поэзія въ лицѣ Рафаэля Патканяна“, որը հրատարակեց յոբելեարը մեր մեծանուն բանաստեղծի նիւթական նեղ դրութիւնը կարելիին չափ թեթևացնելու նպատակով։ Երկրորդ՝ „Армянскій вопросъ“ գիրքը, որի մէջ նա հանդէս է գալիս հայի բարոյական դատը պաշտպանելու ընդդէմ այն անլուր զրպարտիչների, որոնք ամեն կերպ ձգտում են հայի վարկը վայր գցել։ Գիրքը խօսում է ամեն մի հայի այրված սրտից։ Երրորդ՝ Նալբանդեանի և Պատկանեանի երկասիրութիւնների լիակատար ժողովածուն, որի կարիքը այնպէս զգալի էր հայ գրականութեան համար։ Չորրորդ՝ «Հացի կտոր Զէյթունցուն», որի հասոյթը—մի 2,000 ր.—գնացել է յօգուտ Կիլիկիայի աղէտեալների. վերջապէս երկար տարիներ նրա՝ «Մշակին» թղթակցելը և այլն։

Յոբելեարը ջերմեռանդութեամբ համբուրեց կոնդակը։

Սրանից յետոյ կարդացվեց Թիւրքիայի հայոց պատրիարք Դուրեանի հեռագիրը՝ Թիւրքահայոց անունից։

Այդ երկու նշանաւոր շնորհաւորութիւնները թէ ինչ խոր տպաւորութիւն թողին հանդիսականների և յոբելեարի վրա՝ թողնում եմ զգալ ընթերցողին իրան։

Այնուհետև կարդացվեցին Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի և յաջորդ Մուշէ վարդապետի հեռագիրները։

Յետոյ կարդաց ուղերձ համեստ և մեղուաշեան Վահան վարդապետը*)։ Նա աւելին շատ ունէր, որովհետեւ յոբելեարը նրա աջակիցն է եղել բարեզարդելու ս. Խաչ վանքը. և եթէ պսակ այդ բարեզարդութեան, յոբելեարի ջանքով և եռանդով է, որ այսօր գեղեցիկ վանքի բակում թաղված մեր երկու անմահ լուսաւոր աստղերի—Պատկանեանի և Նալբանդեանի—գերեզմանների վրա կանգնեցված են գեղեցիկ արձաններ։

Շնորհաւորեցին յոբելեարին և ուղերձներ մատուցին հայ եկեղեցիների, Թեմական դպրոցի, ծխական խորհուրդների, փաստաբանների, նրանց երիտասարդ օգնականների և այլ շատ հիմնարկութիւնների կողմից։

Քաղաքի կողմից ուղերձ կարդաց քաղաքագլուխ Մինաս Իլիչ Բալաբանեանը։

Քաղաքը յոբելեարի անունը յաւերժացնելու նպատակով նշանակում է մի ստիպենդիա տեղիս օրիորդաց գիմնազիայում։

Ուշագրաւ են տեղիս Հայոց Գ. Հ. Բարեգ. Ընկերութեան ուղերձի մէջ ասված հետեւեալ տողերը. «Վերջին 25 տարին չը կայ Նոր-Նախիջևանում մի որևէ հասարակական ձեռնարկութիւն, որի մէջ դուք ունեցած չը լինէք ոչ թէ միայն մասնակցութիւն, այլ որի գլուխ չը լինէք կանգնած»։

Ընկերութիւնը վճռել է՝ ա) իր մշտական պատուաւոր անդամ կոչել յոբելեարին, բ) կախել նրա լուսանկարը Ընկերութեան դահլիճի մէջ, գ) հոգևոր դպրոցում պահել մի գիշերօթիկ սան յոբելեարի անունով։

Մինչ շնորհաւորութիւնները այդպէս ընթանում էին, յանկարծ՝ յոբելեարի համար բոլորովին անսպասելի՝ յայտնվեց նրա առաջ «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարը, որ յարմարեցրել էր իր ճանապարհորդութիւնը այնպէս, որ ներկայ լինէր յոբելեանին։ Նա ասաց մի սրտաշարժ ճառ, բնորոշելով Ջալխուշեանին, որ նա այն հազուագիւտ մարդկանցից է, որոնք ընդունելով իրանց մէջ հասարակական այս և այն խոշոր երևոյթի ապաւորութիւնը՝ իր մօմենտին կարողանում են լինել նրա ճշգրիտ արտայայտիչը և թարգմանը, ինչպէս մի անօթ, որ ժողովելով իր մէջ ճառագայթներ և յանկարծ բռնկվելով միանգամից՝ լուսաւորում է իր շուրջը։

Ալ. Քալանթար ապա ողջունեց յոբելեարին «Մշակի» կողմից, որը նրա ժրաջան աշխատակիցն է եղել և հետևողը նրա հիմնադրի գաղափարներին, ինքը զօրեղ կերպով զգալով և իր գրչով զգալ տալով ընթերցողներին ազգի գլխին անցած աղէտների և արհաւիրքների մասին։ «Գնահատելի է ձեր ծառայութիւնը ազգին։ Կեցցէք դուք, իբրև պարտաճանաչ քաղաքացի, եռանդուն հասարակական գործիչ և ազնիւ ու ներշնչված գրող»։ Բուռն ծափահարութիւնների տակ նրանք մօտեցան իրար և համբուրվեցին

Սրանից յետոյ կարդացվեցին շատ հեռագիրներ՝ «Մշակի», «Արօրի», «Աղբիւրի», «Տարազի» կողմից, մեր ծերունազարդ դրամատուրգ Սունդուկեանի, Բ. Հ. Մ. Ընկերութեան, Բ. Հ. Կ. Միութեան և ուրիշ շատ հիմնարկութեանց ու անձնաւորութիւնների կողմից՝ թւով մինչև 90։

Այնուհետև յոբելեարն ասաց մի ազդու, պերճախօս, սրամիտ և խելօք ճառ. Նա նախ ուղղեց իր որդիական սէրը, երախտագիտութեան և յարգանքի զգացումները Վեհափառ Հայրապետի և Դուրեան պատրիարքի հասցէներին և ապա, հերթով, բոլոր իրան շրջապատող շնորհաւորողներին։

Դառնալով իր համբուսատակից փաստաբաններին, որոնց մէջ կային հայ, ռուս, հրեայ, լեհ և այլ ազգեր, ասաց նա.

«Փաստաբանը ամենից առաջ մի մարդընչող է. նա չունի իրաւունք իր տաղանդը թաղելու հողի մէջ։ Մեր երկիրը խարխափում է տգիտութեան և նախապաշարումների մէջ. մենք պարտաւոր ենք կռիւ մղել խաւարի դէմ, որովհետև մեր մէջ կրում ենք ճշմարտութեան և արդարութեան կոչում. այդ կոչումը մենք պէտք է բարձր բռնենք»։

Ես մէջ չեմ բերի գեղեցիկ պատասխանճառի մանրամասնութիւնները, տեղի սղութեան պատճառով, նոյնպէս ներողութիւն խնդրելով՝ չեմ յիշի շատ անուններ և այլն. սակայն չեմ կարող չը յիշել ճաշի ժամանակ յոբելեարի հետևեալ սրտաշարժ խօսքերը.

«Փոքր էի և, ինչպէս շատ փոքրերին յատուկ է, սիրում էի և պահում աղաւնիներ։ Մի օր, երբ 7 ուրիշ երեխաների հետ վիճակ էին ձգում, թէ մեզնից որին պիտի ժպտայ բաղդը ստիպենդիանտ լինելու տեղիս Հ. Բ. Ընկերութեան, ես մտքումս վճռեցի. եթէ այդ բաղդաւորը ես կը լինեմ, ապա կը ծախեմ իմ սիրելի աղաւնիներս, մոմեր կը գնեմ և կը վառեմ Աստուածածնի առաջ… Վիճակն ընկաւ ինձ»։

Եւ մենք կասենք. հազար երանի մեզ, որ այդպէս եղաւ։ Դուք ունէք բարի սիրտ, իսկ կրթութիւնն եկաւ նրան ղեկավարելու և ուղղութիւն տալու։

Ճաշի ժամանակ, ըստ առաջարկութեան Ջալալեան Գէորգի, Մ. Բալաբանեան բոլոր այլազան հասարակութեան անունից շնորհակալութեան հեռագիր տուեց Վեհ. Հայրապետին, որ Նա Իր մեծ ուշադրութեան արժանի արաւ մեր յոբելեարին։

Ճաշն անցաւ շատ ուրախ. երգվեցին հայ ժողովրդական, ուսանողական, սիրոյ և գինու երգեր։

Ճաշին յոբելեարը յայտնեց, որ այսօր նա նուիրում է զանազան աստուածահաճոյ ինտերնացիօնալ հիմնարկութիւնների օգտին 1,000 ր.։

— Սովորաբար յոբելեարն է ստանում ուրիշներից, իսկ այստեղ նա ինքն է նուիրում…,—նկատեց մի հանդիսական*)։

Ալ. Աբէլեան

12 ՕՐ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

I

Մի գերդաստանի գնահատութիւնը, նրա արժանաւորութիւնների որոշումը կախված է նրա անդամների առանձին առնված առաւելութիւններից կամ պակասութիւններից։

Մի գերդաստան գերադասվում է միւսից իր բարոյական, մտաւորական և ֆիզիքական զարգացման բարձր աստիճաններով՝ մի կողմից և երկարատև կենսունակութիւններով՝ միւս կողմից։

Հայ ազգը ամեն տեղ մեծ կարօտութիւն ունի բարոյապէս, մտաւորապէս և ֆիզիքապէս լաւ զարգացած երկու սեռի անձերի։

Այս բանում լաւ համոզվելու համար, թող ուշիմ դիտողը իր անաչառ ուշադրութիւնը դարձնէ հայ ազգի անդամների ընտրած ասպարէզների վրա և թափանցող հայեացքով քննէ վերջինների գործունէութիւնները. անշուշտ այդպիսին կը համոզվի, որ մենք սարսափելի կերպով յետ ենք մնացած ուրիշ շատ ազգերից թէ բարոյապէս, թէ մտաւորապէս և թէ ֆիզիքապէս։

Երբ մի ազգ իր սեփական բարոյական, մտաւորական և ֆիզիքական ույժերով չէ կարող ինքն իրան զարգացնել կանօնաւոր կերպով, նա պէտք է ընտրէ իր համար իբրև ուսուցիչ մի այլ՝ աւելի առաջադէմ ազգ և ռեցեւ ստամ քայլ առ քայլ։

Ինչպէս առանց ուսուցչի աշակերտը մոլորվում է, այնպէս էլ է աշակերտող ազգի վերաբերմամբ։

Էջմիածնի միաբանութիւնն է ղեկավարող մարմին բոլոր Ռուսաստանի հոգևորականութեան և հայ ժողովրդի բարոյական զարգացման։

Միաբանութեան կենսունակութիւնը կախում ունի արտաքին ուժեղ անձերի ներգրաւել միաբանութեան մէջ սիրով ընդունելու։ Ջի՞ որ գետը կը չորանայ, եթէ նրա օժանդակները դադարեն նրա մէջ թափվելու։

Որքան մխիթարական կը լինէր, եթէ Էջմիածինը հրաւիրէր միջնակարգ ուսում աւարտողներից նրանց, որոնք համաձայն են Էջմիածնի միաբան լինելու այն պայմանով, որ վերջինները պարտաւորվեն համալսարաններ մանելու և սովորելու Էջմիածնի հաշւով իրաւագիտութիւն, բժշկութիւն, գիւղատնտեսութիւն, լեզուաբանութիւն, աստուածաբանութիւն, հնախօսութիւն և մանկավարժութիւն։

Աշխարհի մէջ մինչև 40,000 լրագիր է հրատարակվում, որոնցից գրեթէ 20,000-ը հրատարակվում է անգլիերէն լեզուով։ Անգլիական մեծ ազգը կառավարում է մինչև 425 միլիոն ապատակ ժողովուրդ՝ զանազան ազգերից բաղկացած։ Նա 28 տարվայ մէջ Եգիպտոսի արաբներին ու խպտիներին եւրօպականացրեց, քաղաքակրթեց։ Ո՞ւմ յայտնի չէ, որ անգլիական մեծ ազգը ամենաբարոյական, ամենավարչական և ամենատաղանդաւոր ազգերից մինն է։

Ո՞ր ազգը իր կատարելագործութեան համար չէ դիմում Անգլիային։ Նա, ըստ իս, համաշխարհային ուսուցիչ է։

Երբ Էջմիածինը այս կերպ կը լրացնէ անդադար իր գործիչ միաբանների պակասորդը, այն ժամանակ նա կարող կը լինի ունենալու արժանաւոր մասնագէտներից կազմված ուսուցչական խումբ ճեմարանի համար, հմուտ ղեկավարներ թեմերի համար, բարոյական քարոզիչներ եկեղեցիների համար, արժանաւոր տեսուչներ ուսումնարանների համար, 800-ի չափ հայաբնակ գիւղերի համար գործիչ գիւղատնտեսներ և այլն։

Թող Էջմիածինը հրաւիրէ, իսկ գործելու ընդունակները սիրով դիմեն դէպի Էջմիածին՝ իրանց ծառայութիւնը ազգին մատուցանելու համար։

Սրապիոն ք. Սամուէլեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գանձակ, 16 հոկտեմբերի

Այսօր, շաբաթ, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան տօնի օրը, Ս. Յովհաննէս աւագ եկեղեցում հանդիսաւոր մաղթանք կատարվեց։

Հոգևոր կառավարութեան կարգադրութեան համաձայն՝ պետական բոլոր բարձր և ստորին դպրոցների հայ աշակերտ-աշակերտուհիները ազատ էին պարապմունքից, ինչպէս նաև ծխական դպրոցների երկսեռ սաները։ Ժամը 10-ին սկսվեց պատարագը, որ մատուցանում էր Գար. քահ. Թումանեանց։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին քաղաքիս բոլոր հոգևորականները, դպրոցների սաներն իրանց դաստիարակներով և հոգաբարձուներով։ Եկեղեցում, ինչպէս ասում են, ասեղ ձգելու տեղ չէր մնացել, գլխաւորապէս մատաղ սերնդի ներկայութեան պատճառով. պատարագի վերջում, մաղթանքից առաջ յաջորդ Լևոն վարդապետը քարոզ խօսեց, բացատրելով ընդհանրական Հայրապետի սրբազանութիւնը հայոց ազգի համար, բարեմաղթեց հայրապետական գահին աստուածային յարատևութիւն, իսկ Նորին Սրբութիւն Վեհափառ Մատթէոս Կաթողիկոսին, ի փառս ազգի և եկեղեցու, արևշատութիւն. հայր յաջորդի խօսքերը դիւրըմբռնելի էին և շատ ազդու։

Մաղթանքից յետոյ հոգևորականութիւնը գնաց յաջորդարան, որտեղ Գրիգոր աւ. քահ. Թումանեանցը հոգևորականութեան կողմից շնորհաւորելով հայր սուրբին որպէս Վեհի ներկայացուցչի՝ բարեմաղթեց Վեհափառին երկար տարիներով կեանք, իսկ հայրապետական աթոռին հաստատութիւն. այստեղ ևս հայր սուրբը խօսեց Էջմիածնի և նրա գահակալների նշանակութեան մասին և ապա հոգևորականութիւնը դէպի հայրապետական գահը ունեցած զգացմունքների առիթով յայտնեց շնորհակալութիւն։

Աւելորդ չեմ համարում ասել, որ հայր յաջորդը իր Գանձակ գալու օրից սկսած սեպուհ պարտականութիւն է համարել զբաղվել դպրոցական խնդիրով։ Նա այցելութիւններ է անում պետական և ծխական դպրոցները և ներկայ լինում կրօնի և հայոց լեզուի դասերին։

Հայր սուրբը ամսիս 11-ին գնալով Գանձակի մօտ մի քանի գիւղերի այցելութեան՝ վերադարձաւ 15-ի երեկոյեան. Նա շատ անմխիթար գոյներով էր նկարագրում հոգևորականների և ժողովրդականների երկուստեք յարաբերութիւնների մասին, ևս առաւել քահանաների, որո՛նք իրանց կոչմանը չեն ծառայում։

Գանձակեցի

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնը մշակեց օրինագիծ՝ ադմինիստրացիա նշանակելու կարգը փոխելու մասին առևտրական սնանկութեան դէպքում։

Ներկայումս ադմինիստրացիա նշանակելը կախված է առևտրական դատարաններից։ Իսկ օրինագծի համաձայն, ադմինիստրացիա է նշանակվում բօրսային կոմիտէտի վճռի համեմատ, որը հաղորդում է միայն իր վճռի մասին տեղական դատաստանական ատեաններին։ Վերջինները, ըստ էութեան չը քննելով բօրսային կոմիտէտի որոշումը, հրաման են արձակում միայն ի կատար ածել այդ։

Ադմինիստրացիան նշանակվում է միայն այն դէպքում, եթէ ձեռնարկութիւնը կենսունակ է և շանսեր ունի դրստելու իր գործերը։ Դեֆիցիտը անհրաժեշտ պայման չէ ադմինիստրացիա նշանակելու համար։ Երբ դեֆիցիտ կայ, նա ակտիվի 50%-ից բարձր չը պէտք է լինի։ Հակառակ դէպքում, ձեռնարկութիւնը համարվում է վերջնականապէս անյուսալի, և ադմինիստրացիա չէ նշանակվում։

Նոր օրինագիծը ոչինչ տարբերութիւն չէ դնում խոշոր և մանր ֆիրմաների միջև և հրամանագրում է բօրսային կոմիտէտներին վճռել ադմինիստրացիային վերաբերեալ գործերը, ղեկավարվելով բացառապէս ներքին համոզմունքով, անկախ ձեռնարկութեան չափերից։

Ադմինիստրացիային վերաբերեալ գործերը վճռելու համար բօրսային կոմիտէտներին կից հիմնվում է առանձին ատեան վեց պատւաւորագոյն առևտրականներից։ Նախագահում է առանձին ատեանում բօրսային կոմիտէտի նախագահը։ Այդ ատեանների վճիռները անբեկանելի են։ («Р. С.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կիրակի օրը, հոկտեմբերի 17-ին, Նորին Մեծութիւնների հրաշքով ազատվելու օրը այն խորտակումից, որ պատահում էր Բօրկի կայարանում գնացքի խորտակման ժամանակ, Վրաստանի էկզարխը զինուորական տաճարում մատուցեց պատարագ և կատարեց գոհաբանական մաղթանք։ Ներկայ էին Փոխարքան իր երկու օգնականներով և զինուորական ու քաղաքացիական հաստատութիւնների ներկայացուցիչները։ Տղայոց 1-ին գիմնազիայի աշակերտութիւնը իր երաժշտութեամբ անցաւ Գօլօվինսկի պրօսպեկտով։

◆ «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթար վերադարձաւ Թիֆլիս իր ճանապարհորդութիւնից և վաղվանից կը մտնի իր խմբագրական պաշտօնի մէջ։ Ա. Քալանթար մասնակցեց Պետերբուրգի կենդանաբանական համագումարին, իբրև նրա անդամ և նախագահ. եղաւ էկսպերտ կենդանաբանական ցուցահանդէսում։ Այնուհետև ճանապարհորդեց դէպի Սև-ծովի ափերը և ուսումնասիրեց այնտեղի կենդանաբանութեան վիճակը։ Վերադարձին եղաւ Նոր-Նախիջևանում, ուր ներկայ եղաւ Գ. Ջալխուշեանի յոբելեանին, իսկ Բագւում մասնակցեց երկու խորհրդակցութիւնների, որոնք նուիրված էին կաթնատնտեսութեան և այգեգործութեան զարգացման խնդիրներին։

◆ Բարձր իշխանութեան որոշմամբ Թիֆլիս քաղաքին զինուորական մասերի բնակարանների վարձի դրամ տրվում է 65,000 ր., Բագու քաղաքին՝ 25,000 ր., Բաթումին՝ 7,500 ր., Ախալցխային 3,500 ր., Երևանին 5,500 ր., Ալէքսանդրօպոլին 4,500 ր., Գանձակին 2500 ր., Կարսին 1,000 ր. և այլն։

◆ Շուտով Թիֆլիսը հեռախօսով կը միացվի Բագուի հետ։ Աշխատանքներն արդէն սկսված են։

◆ Կիրակի օրը, հոկտեմբերի 17-ին, տեղի ունեցաւ օդաչու Ուտօչկինի երկրորդ և վերջին թռիչքը։ Ժամը 12½-ի մօտերը «Ֆարման» սիստեմի աէրօպլանը տարվեց այնտեղը, որտեղից Ուտօչկինը կատարելու էր իր թռիչքը։ Առաջին անգամ Ուտօչկինը բարձրացաւ 60—70 մետր և շրջան կատարեց թռչատեղի գլխին։ Եղանակը անձրևային էր և այնքան էլ չը նպաստեց թռիչքներին։ Չը նայած դրան այնուամենայնիւ Ուտօչկինը կատարեց դարձեալ չորս թռիչքներ, որոնցից՝ երկու անգամ մարդկանց հետ։ Մի անգամ նա դուրս եկաւ նոյնիսկ ձիարշաւային տարածութիւնից (թռիչքները կատարելու տեղը) և, անելով մի քանի աջող պտոյտներ օդում, կրկին կերպով իջաւ այն տեղը, որտեղից որ բարձրացել էր։ Թռիչքներին ներկայ էր հոծ բազմութիւն։

◆ Շաբաթ երեկոյեան, հոկտ. 16-ին, ոստիկանութիւնը անակնկալ ներս մտաւ «Ախալի Ազրի» թերթի խմբագրատուն այն րոպէին, երբ խմբագրական ժողով էր։ Ոստիկանութիւնը ձերբակալեց բոլոր ներկայ եղողներին, թւով 11 մարդ, և տարաւ ոստիկանատուն։ Թերթի հրատարակութիւնը դադարեցված է։

◆ Շաբաթ, հոկտ. 16-ին, երեկ. ժ. 8-ին, կայացաւ Ռուսաց Աշխարհագրական Ընկերութեան կովկասեան ճիւղի անդամների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին 23 անդամներ։ Այդ նիստում Փոխարքայի օգնական սենատոր Վասացին միաձայն ընտրվեց ճիւղի անդամ։ Ապա ժողովը կատարեց ճիւղի նախագահի, փոխ-նախագահի և կարգադրիչ մասնաժողովի 4 անդամների ընտրութիւնը՝ գաղտնի քուէարկութեամբ։ Ճիւղի նախագահ ընտրվեց միաձայն՝ սենատոր Վասացին, փոխ-նախագահ՝ գեներալ Շնիտկին, 20 ձայնով և ձայների առաւելութեամբ մասնաժողովի անդամներ՝ Կազնակով, Րօլլօվ, Ուզինից և Վօրօնօվ։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան քարտուղարի պաշտօնի համար հրաւիրվեց երդ.-հաւատ. օգնական Խ. Թամամշեանը, որ աւարտել է Պետերբուրգի համալսարանի դասընթացքը և լրացրել է իր կրթութիւնը արտասահմանում։

◆ Արտիստ Կլեմէնտևի դագաղի վրա Էյխէնվալդը պսակներ դրեց Մոսկվայի Կայսերական Մեծ թատրոնի, Կիևի օպերային խմբի, Թիֆլիսի արտիստների, Մոսկվայի Ձմերային թատրոնի խմբի և Ժողովրդական Տան խմբի կողմից, համաձայն սրանց խնդրքի։

◆ Տարվայ սկզբից մինչև հոկտեմբերի 1-ը քաղաքային գանձարկղը իսկական եկամուտներ ստացաւ 280,000 ր.։

◆ Պետերբուրգում նոյեմբ. 14-ին տեղի ունենալիք առևտրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչների համագումարին Բագուի նաւթարդիւնաբերական համագումարի խորհուրդն ուղարկում է հետևեալ անձանց. Ս. Լիանոզեանին, Ն. Իգնարին, Պ. Ղուկասեանին, Է. Նօբէլին, Գ. Էկլունդին, Լ. Ձեյգլին, Տ. Բէլօզէրսկիին և Մուխինին։

◆ Թիֆլիսի Բուսաբանական այգու վերատեսուչ Րօլլօվը միջնորդութիւն յարուցեց Արխիպօվի առաջ, որպէսզի արտասահմանից բերվի զանազան բանջարների ընտիր սերմեր և ձրիաբար տրվի այն տեղերի դպրոցներին և գիւղացիներին, ուր նպաստաւոր հող կայ բանջարանոցներ տնկելու համար։

◆ Հոկտեմբերի 15-ին Գօրի քաղաքից եկաւ օր. Օլգա Ցէլօվալնիկօվան, որ երևաց խոլերայով հիւանդ։ Նրան անմիջապէս տարան բարակները, իսկ բնակարանը, ուր նա իջևանել էր, ախտահանվեց։

◆ Առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրը մինիստրների խորհրդին առաջարկութիւն արեց՝ Սուրախանի հողերը նաւթ ստանալու մտքով շահագործելու մասին։ Փորձեր լինելու են 200,000 դեսեատին տարածութեան վրա։

◆ Մի խումբ վրացիներ, «Зак. Об.»-ի ասելով, վճռել են հրատարակել Թիֆլիսում մի ռուս-վրացական շաբաթաթերթ կրօնական և հոգևոր բովանդակութեամբ։

◆ Հոկտեմբերի 16-ից Աւճալեան նորակառոյց էլեկտրական գծերից մեկի վրա երթևեկում են էլեկտրաքարշ վագոններ։

◆ Բօրսայի դահլիճում կիրակի օրը նշանակված «Խանում» կօմեդիան, լուսաւորութիւնը հանգելու պատճառով, չը կայացաւ և յետաձգվեց հետևեալ կիրակի օրվան։

◆ Մեզ հաղորդում են, որ հոկտեմբերի 16-ին Բագւում տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն Նահանգապետի նախագահութեամբ՝ բանալու Բագւում յատուկ մի կօմիտեա վազապանութեան և գինեգործութեան շահերի պաշտպանութեան համար։ Խորհրդակցութեան հրաւիրված էին տեղական գիւղատնտեսներ և մասնագէտներ։ Խորհրդակցութիւնը, աչքի առաջ ունենալով խաղողի այգիների ընդարձակումը և տեղական գինու լաւ յատկութիւնները (օրինակ Մաղրասայի, Սալեանի) հաւանութիւն տուեց կօմիտեա հիմնելու գաղափարին։ Մասնագէտներ Պ. Մեդվեդեվ, Ստ. Խոջայեան, Ալ. Քալանթար, Գ. Տէր-Ստեփանեան յայտնեցին մի շարք խորհրդածութիւններ կօմիտեայի գործունէութեան մասին։ Իսրեյէլ ընդգծեց գործնական ցոյցերի նշանակութիւնը։ Տէր-Մարկոսեան նկարագրեց այգեգործների կարիքները։ Խորհրդակցութիւնը ցանկութիւն յայտնեց աւելացնել նախահաշուի մէջ այն գումարները, որոնք ծառայում են բժշկական միջոցներ ձեռք բերելու։ Կօմիտեան կը սկսի գործել եկող 1911 թւականից։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ 1911 թւականին Շամախու գաւառում պէտք է ընդարձակվի հրահանգչական գործունէութիւն կաթնատնտեսութեան ասպարէզում։ Այդ գաւառը պէտք է ուղարկվի յատուկ ինստրուկտոր, որը կը սկսի գործել գարնան ամիսներից։

◆ Ինչպէս տեղեկանում ենք Կ. Պօլսի թերթերից, կրօնի դասագրքով մեծանուն յայտնի՝ Սահակ աւ.-ք. Սահակեանցի հրատարակած «Հին-Ուխտի ս. պատմութիւն» կրօնի դասագիրքը Թիւրքահայ բարբառով Պօլսի կրօնական ժողովի և ուսումնական խորհրդի կողմից հաւանութիւն գտնելով իբրև ամենից նպատակայարմարը և լաւը՝ իր դասական ոճով, յանձնարարված է իբրև դասագիրք ազգային վարժարանների մէջ գործածութեան համար։

◆ Դաւանանքի ազատութեան մասին հրովարտակ հրատարակելու օրից, պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, մինչև 1910 թւի յուլիսի 1-ը, ուղղափառութիւնից կաթոլիկութիւն են ընդունել 233,000 մարդ, ի թիւս որոց 168,000-ը՝ Լեհական թագաւորութեան մէջ և 65,000-ը Արևմտեան երկրում։ Միևնոյն ժամանակամիջոցում ընդունել են բողոքականութիւն 14,500 հոգի, մահմեդականութեան են անցել 50,000 մարդ, 1000 հոգի ընդունել են հրէական կրօնը, 3,400՝ բուդդայականութիւն և 150,000 մարդ էլ դարձել են կռապաշտ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Հոկտեմբերի 16-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մանկիզեվսկայա փող. № 15 տանը ապրող թիֆլիսեցի Եկատերինա Ցխվէտաձէն, 17 տարեկան, ինքնասպանութեան նպատակով խմեց նաշատիրի սպիրտ։ Թունաւորվածին տարան հիւանդանոց, որտեղ օգնութիւն հասցնելուց յետոյ ուղարկեցին տուն։

◆ Հոկտեմբերի 16-ին, երեկոյեան ժամը 7-ին, Պեսկօվսկայա փող. № 81 տանը պահակ Աֆանասի Կլօչինը արբած ժամանակ ինքնասպանութեան նպատակով բրաունինգից վիրաւորեց իրան. վիրաւորին անզգայ դրութեան մէջ տարան հիւանդանոց։

◆ Հոկտեմբերի 17-ին, Երևանեան հրապարակի վրա, զաքաթալացի Վարդան Վարդանեանը կամենալով էլեկտրաքարշի գնալու ժամանակ իջնել՝ վայր ընկաւ և կոտրեց ձախ ձեռքը։ Վիրաւորին տարան Միքայէլեան հիւանդանոց։

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ Հոկտեմբերի 10-ին ժամանեցին Բաթում Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեան և նորաօծ եպիսկոպոսներից՝ Մկրտիչ Աղաւնունի, Կարապետ Մաղլուտեան, Թորգոմ Գուշակեան, Զաւէն Տէր-Եղիայեան և Սմբատ Սաատէթեան։ Մնացին քաղաքումս 4 օր, այցելեցին հայոց եկեղեցին ու ծխական դպրոցը։ Հինգշաբթի օրը Պակէ Ընկերութեան «Իմէրեթիա» շոգենաւով մեկնեցին դէպի Կ. Պօլիս՝ իրանց թեմերը գնալու համար։ Արքեպիսկոպոս Սմբատեանը գնում է Երուսաղէմ։ Սմբատ եպիսկոպոսը ընկերներին ճանապարհ ձգելուց յետոյ՝ վերադարձաւ երկաթուղով Թիֆլիս, Կարսի վրայով Երզրում իր վիճակն անցնելու համար։

◆ Շաբաթ օրը, հոկտեմբերի 16-ին, Վեհափառ Մատթէոս Կաթողիկոսի անուանակոչութեան առիթով պատարագ կար եկեղեցում, ուր ներկայ էին գիմնազիայի հայ աշակերտները և քաղաքային հայ դպրոցն իր ամբողջ կազմով՝ աշակերտ-աշակերտուհիներով և ուսուցչուհով։ Փայլում էին իրանց աչք ծակող բացակայութեամբ եկեղեցական-ծխական դպրոցների աշակերտ-աշակերտուհիներն իրանց ուսուցիչ-ուսուցչուհիներով ու հոգաբարձուներով։

◆ Կիրակի օրը, հոկտ. 17-ին, նշանակված է անցեալ ծխական ժողովի շարունակութիւնը։

◆ Կ. Պօլսի հայոց պատրիարքից շնորհակալութեան ու օրհնութեան գիր է ուղարկվել Մեսրոպ աւ.-ք. Մելեանին այն սիրալիր ընդունելութիւնների համար, որ նա ցոյց է տուել Բաթում ժամանող եպիսկոպոսացուներին։

Վ.

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական թատրօն.—«Էլգա», դրամա 5 գործ. և 7 պատկերով, թարգմ. Վարդգէսի։

Էմիլ Զօլայից յետոյ նատուրալիստական ուղղութիւնը, արդարև, արագ քայլերով դիմեց իր վախճանին, տեղի տալով Մարսէլ Պրեվօյի հոգեբանական, իդէալիստական և զգաբանական հոսանքներին։

---

*) Անօրինակ բան. քանի ամիս առաջ Էջմիածնից հրաւիրված էր հայր-սուրբը եպիսկոպոս ձեռնադրվելու. այդ պատւից նա հրաժարվեց իրա անձը անարժան համարելով։ Զարմանալի համեստութիւն, որ կարող է միմիայն պատիւ բերել իրան… վասն զի… իսկական շատ անարժանները չը գիտեն ինչ միջոցի դիմել, որ անպատճառ եպիսկոպոս դառնան… Թերևս և ծիծաղելի էլ ինչ։ Ծանօթ. յօդ.

*) Գ. Ջալխուշեան որդեգիր է եղել տեղիս Հ. Բ. Ընկ., բայց ուսումն աւարտելուց յետոյ նոյն Ընկերութեան վերադարձրել է իր բոլոր ստացածը յաւելուածով։ Այդ՝ և նրա փայլուն հասարակական գործունէութիւնը կարծեմ մի գեղեցիկ օրինակ կարող է ծառայել այն պարոնների համար, որոնց անունները քանի ժամանակ առաջ հրատարակվեցին լրագիրների մէջ, որպէս կարողութիւն ունեցող, բայց պարտքերը չը յիշող անձնաւորութիւնների։ Ա. Ա.

Գերման ժողովուրդը ևս տուեց մի շարք հանճարեղ ժամանակակից գրողների, որոնք իրանց պարթև մտքով ջանում են լուծել կեանքի բարդ առեղծուածը, կեանքի ճշմարտութիւնը...

Եւ Հաուպտմանը նոյնպէս, իբրև աշակերտ մեծ Իբսէնի, յիշեալ պրոբլէմը ասես լուծում է մի իմաստով՝ թէ երկրիս վրա մարդկային երջանկութիւնը յաւրատև ու մշտնջենական չէ կարող լինել...

Այդ է ապացուցանում տաղանդաւոր դրամատուրգը իր «Էլգա» դրամատիքական գրուածքով, որի մէջ, յանձին իշխան Ստարժէնսկիի և սրա կողակից Էլգայի, Հաուպտմանը էլ աւելի խորաթափանց ու խիզախօրէն—քան Զուդերմանը—տալիս է անհատականութեան կատարեալ նկարագրութիւնը։

Էլգա, որ մարմնացումն է գեղեցիկ կնոջ, սակայն միևնոյն ժամանակ օձ է իր երկրպագու ամուսնու համար. դաւաճան է նա այն էակին, որ կեանքի միակ էութիւնը գտել էր իր «աստուածապատկեր» կնոջ մէջ... էակի, որ վերջ ի վերջոյ խորտակւում է հէնց այդ «երջանկութեան աղբիւրի» ձեռքից...

Վերոյիշեալ պիէսը առաջին անգամ խաղաց Թատերասէրների խումբը Զուբալովի Ժողովրդական Տանը, շաբաթ, հոկտ. 16-ին։

Ստեփանեան ամուսինները իրանց վրա ծանր պարտականութիւն էին վերցրել, խաղալով առաջինը իշխանի, երկրորդ՝ Էլգայի դերերը։ Բայց ի պատիւ երկուսի էլ, նկատենք, որ նրանց խաղը գոհացուցիչ էր. պարոնը փորձված դերասան է, իրան ազատ է պահում բեմի վրա, առոգանութիւնը լաւ է։ Նա բնորոշ ներկայացրեց Ստարժէնսկիի կեանքի երկու շրջանները.— դէպի երջանկութիւն, և դէպի խորտակում...

Տիկինը խաղում է սահուն, միայն բացատրվելու ժամանակ նրա տեմպերամենտը սառն է։

Ի հարկէ, Էլգայի բարդ հոգեբանական դերը աւելի նուրբ կատարում պէտք է ունենայ, բայց մենք առհասարակ ներողամիտ ենք վերաբերվել ժողովրդական բեմի վրա խաղացողներին, նկատի առնելով սիրողների կարողութեան չափը և այդ թատրոնը յաճախող հասարակութեան կրիտէրիումը։

Իր տեղին էր տ. Զաբէլ՝ իշխանի մօր դերում։

Տէր-Առաքելեան կարող եղաւ ներկայացնել Օգինսկիին իբրև սիրահարի և մրցակցի։

Լաւ էր Յովհաննիսեան կառավարչի մոնոտօն դերում, եթէ հաշւի չառնենք իր հասակին անհամապատասխան աշխոյժ շարժումները։

Աջող էր օր. Ժասմինը, որ ընդունակ խաղացողի առաջադիմութիւն է անում. աղախնու փոքրիկ դերը նա ներկայացրեց իր հարազատ գծերով։

Բաւարար էին նաև Գալստեան և Յարութիւնեան։

Ուրախ ենք, որ հայ թարգմանական ռեպերտուարը հարստացաւ «Էլգա» շահեկան դրամայով, որի բովանդակութեան հետ հայկական սեկցիան բարւոք տեսաւ ծանօթացնել թատրօնասրահին նախ քան ներկայացումը։

Ե.

—

Շաբաթ, հոկտեմբերի 16-ին, վրաց դերասանական խումբը երկրորդ անգամ խաղաց Շիուկաշվիլիի «Այլանդակութիւն» պիէսը, իսկ կիրակի, ամսիս 17-ին, նոյն խումբը, մասնակցութեամբ Վլ. Ալէքսիեվ-Մէսխիշվիլիի, ներկայացրեց Սուխովո-Կոբիլինայի «Կրէչինսկու հարսանիքը» կոմէդիան, որի մէջ Ռասպլիևի դերը կատարում էր Վլ. Ալէքսիեվ-Մէսխիշվիլին, իսկ Կրէչինսկու դերը խաղում էր Իւ. Զարդալիշվիլին։ Խաղը անցաւ շատ կենդանի։

Վերջում դերասան Կ. Մէսխիի մասնակցութեամբ խաղացվեց «Նապոլէօնի մահը Ս. Հեղինէի կղզում» պիէսը, որը հասարակութեան վրա նպաստաւոր տպաւորութիւն թողեց։

Այսօր նոյն խումբը, մասնակցութեամբ տ. Տասօ Աբաշիձէի և Վասօ Աբաշիձէի, կը ներկայացնէ «Հրաւէրք իտալացիների հետ» ֆարսը։

A—s

—

Ուրբաթ, հոկտեմբերի 14-ին, ռուսաց դրամատիկական խումբը ներկայացրեց «На Станціи Забытой» (Մոռացված կայարանում) պիէսան, հեղ. Սմոլտովսկիի։

Պիէսայի գործողութիւնը կատարվում է մի երկաթուղու երկրորդական կայարանում և շօշափում է՝ փոքրիկ, նեղ կայարանի մարդկանց հոգեբանութիւնը. դա այն տեսակ պիէսաներից է, որոնք հարիւրներով գրվում են Ռուսաստանում և երբ բաղդը պատահմամբ ձգում է բեմ իբրև մի սենսացիօն նորութիւն, հնանում է հէնց առաջին սեզօնում, իբրև մի ողբալի թիւրիմացութիւն։

Հէնց այնպիսի մի ողբալի թիւրիմացութիւն էր յիշված աշակերտական գրչի արժանի պիէսան։ Հեղինակը ըստ երևոյթին խիստ շատ է կարդացել և ազդվել է Չեխովից, և պիէսայի ծայրից մինչև վերջը դուք կը տեսնէք արդէն բաւական հնացած ռուսական «тоска»-ն. համարեա բոլոր գործող անձինք ընկնում են այդ «тоска»-ի մէջ և օղու բաժակի մէջ լուանում իրանց սրտի վէրքերը։

Բայց զարմանալին այն է, որ այդ կիսագրագէտ, հազիւ կեանքերում մի երկու գիրք կարդացած մարդիկ չափազանց բարդ փիլիսոփայութիւններ են անում կեանքի ունայնութեան և կեանքի փակ դռների մասին։

Եւ դուրս է գալիս այնպէս, որ այդ հոգով մարմնով մեշչանների մէջ, հեղինակի ցանկութեամբ, նստեցված է մտաւոր արիստոկրատիզմի հոգեբանական ապպարատը, որը իրաւ հեղինակի ցուցմունքով զարմանալի մելօդրամական սիրտը պատառող դրամաներ էր առաջացնում այդ խեղճ ու կրակ селедка-ի և огурчикъ-ի շուրջը խմբված մարդկանց սրտերում։

Գրված է պիէսան անհամ լեզուով և զուրկ՝ ռուս գրողներին յատուկ՝ հումօրից։

Ինչ վերաբերում է խաղին, բաւական թոյլ անսամբլով էր տարվում. ըստ երևոյթին անբովանդակ պիէսան և հասարակութեան վրա առաջացրած բացասական տպաւորութիւնը՝ թուլացնում էին դերասանների մէջ ոգևորութիւնը։ Կարա-Դարվիշ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆԸ

I

Կիրակի, հոկտեմբերի 17-ին, Զուբալովի Ժողովրդական Տանը Ն. Երմօլաեվ ռուսերէն լեզուով կարդաց դասախօսութիւն քաղաքատնտեսութեան մասին, որից յետոյ, ինչպէս և ժողովրդական համալսարանի կազմակերպած բոլոր դասախօսութիւնների վերջում, տեղի ունեցաւ համերգ։ Տարաբաղդաբար յարգելի դասախօսին այդ օրը քիչ ժողովուրդ էր եկել լսելու և այդ բացատրվում էր նրանով, որ այդ նոյն օրը օդագնաց Ուտօչկինը Դիդուբէում թռիչքներ էր կատարում և ժողովրդի մեծամասնութիւնը գտնվում էր այնտեղ։ Դասախօսը կարդում էր մատչելի և պարզ լեզուով։

II

Երկրորդ դասախօսութիւնը վրացերէն լեզուով արաւ Դ. Խարթիշվիլին «Յաւիտենական մեքենայի» մասին (պերպետուում մօբէլ), որ պէտք է շարժվի, ըստ դասախօսի, երկրագնդից արտադրված անսպառ ոյժի օգնութեամբ։ Կան դասախօսութիւններ իրանց դասախօսներով, որոնց չը կարդացվելը աւելի օգուտ կը բերէ ժողովրդին և հէնց դասախօսութեան գործին, քան կարդացվելը։ Առանց սիստեմի, ամեն բան, բայց բառերի երկար շարաններից բացի ուրիշ ոչինչ չը պարունակող դասախօսութիւնները միայն սառեցնում են լսողներին և ցածրացնում դասախօսի վարկը. այս հանգամանքը պէտք է աչքի առաջ ունենայ ամեն մէկը, ով մտադրվում է դասախօս լինելու։ Նա պէտք է չափէ իր ոյժը, ինքն իրան հաշիւ տայ և ապա թէ բարձրանայ ամբիօն դասախօսելու, այլապէս յօնքը շինելու տեղ՝ աչքն էլ կը կուրացնեն... Խարթիշվիլիի դասախօսութիւնը, որի ժամանակ ցոյց էին տրվում և պատկերներ, մեզ տուեց տեղեկութիւն և նախնական մարդու, և կապիկների, և նաւագնացութեան, և մագնիտի, և էլեքտրականութեան, և տեղային մամուլի, և ամեն բանի մասին, բայց վերջ ի վերջոյ մենք չիմացանք, թէ որն էր նրա ընտրած թեման և ինչի մասին էր նա 2 ժամ խօսում իր ունկնդիրների հետ։

Բ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 17 հոկտեմբերի

«Մշակի» № 225-ում, Թիֆլիսի թեմի պատգամաւորական ժողովի մասին հաշուետուութեան մէջ ասված է, թէ ժողովի ատենապետութեան համար տրվեցին ի թիւս այլոց նաև Ս. Յարութիւնեանի և Լ. Ղուլեանի անունները և որ գաղտնի քուէարկութեամբ ատենապետ ընտրվեց Յովհ. Թումանեանը։

Յիշեալ գրուածքից ընթերցողը կարող էր եզրակացնել, որ այդ անձերը ևս քուէարկվել են։

Արդ սրանով, իբրև ժողովի քարտուղար, պարտք եմ համարում յայտարարել, որ նախ քան քուէարկութիւնը Ս. Յարութիւնեան, Լ. Ղուլեան և Ալ. Քիշմիշեան կտրականապէս հրաժարվեցին քուէարկվել ատենապետութեան համար, որի մասին յիշատակված էր «Հօրիզօնի» մէջ։

Քարտուղար պատգամ. ժողովի՝

Ս. Եսայեան

—

Նոր-Նախիջևան, 15 հոկտեմբերի

Անկարող լինելով շնորհակալութիւնս յայտնել անձամբ այն բոլոր հաստատութիւններին և պատգամաւորութիւններին, որոնք խօսքով, հեռագրով, ուղերձներով և պարգևներով պատւեցին ինձ իմ 25-ամեայ հասարակական և փաստաբանական գործունէութեան առիթով, արդար համարեցի նուիրել 1,000 րուբլի հետևեալ հաստատութիւններին. Նոր-Նախիջևանի Բարեգ. Ընկերութեան, որի սանն եմ եղել՝ 200 ր., գէյթունցի կարօտեալներին՝ 200 ր., Նոր-Նախիջևանի Կանանց Ընկերութեան և Николаевскому Обществу—100-ական ր., Մեծ-Սալայի և Չալթրի Բարեգ. Ընկերութիւններին, ս. Յովհաննու Կարապետի եկեղեցուն, կաթօլիկների, յոյների և հրէաների Բարեգ. Ընկերութիւններին՝ 50-ական ր.։

Գր. Չալխուշեան

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 հոկտեմբերի

ՎԱՐՇԱՎԱ։ Նէյդգարդտի կարգադրութեամբ գնդապետ Գէսկէտը ըեվիզիա կատարեց պրիվիսլեանեան երկաթուղիների գծերի վրա։ Քննվեցին 2,000 գանգատներ։ 17 ծառայողներ ստացան նկատողութիւն և պաշտօններից աւելի ստորին կարգն անցան, 48-ի դէմ կը յարուցվի քրէական գործ։

ԵԱԼՏԱ։ Բուխարական էմիրը մեկնեց Բուխարա։

ԱՐԽԱՆԳԵԼՍԿ։ Նաւագնացութիւնը փակվեց։

ՌՕՍՏՕՎ Դ./վ. Սանիտարական գործադիր մասնաժողովը որոշեց քաղաքային ջրանցքը վերաշինել քաղաքի հաշւով։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքը բաց է անում ժանտախտային հիւանդութիւնների դիագնօստիկական բիւրօ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Շտալմէյստէր Բուկսէվցէն նշանակվեց դեսպան Կոպէնհագէնում։

Խոլերայով հիւանդ մնում են 153 հոգի։

Գնդապետ Վօնլեարլեանսկին զրկվեց պալատական պաշտօնից։

Ֆինլանդական բժիշկ ֆօն-Վիլէնբրանդտը կառքով անցնելիս կորցրեց Վօսկրէսէնսկայա և Կիրօչնայա փողոցների անկիւնում մի փայտէ արկղիկ ապակեայ շշերով, որոնց մէջ ֆօրմալինում սղմած գտնվում էին Օդեսսայում ժանտախտից մեռածի օրգանները, որոնք գործադրվելու էին Հէլսինգֆօրսի համալսարանի բժիշկ-ուսանողների հետազօտութիւնների համար։ Շշերը ուղարկվեցին բժշկական ինստիտուտը։ Նրա հետ շփում ունեցածներին տեղաւորեցին առանձին բնակարանում։ Բժշկի իջեւանած սենեակը ախտահանվեց։

ՄՕՍԿՎԱ։ Եկաւ սենատոր Գարինը։

ՎԻԷՆՆԱ։ Կեկսհօլմի գնդի պատգամաւորութիւնը վերադարձաւ Վարշավա։

ՑԻՑԻԿԱՐ։ Չին իշխանութիւնները հողաբաժին յատկացրին գերմանական դեսպանատան համար։

ԿԻԼ։ «Պարսէվալ» դիրիժաբլը բարձրացաւ Բօրդէսհօլմում, թռաւ քաղաքի վրայով և իջաւ դաշտում։

ԼՕՆԴՕՆ. «Կլէման-Բայար» դիրիժաբլը գնվեց 17,000 րուբլով անգլիական զօրքի համար։

17 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բուլգակօվը Գատչինայի աէրօդրօմում ռուսական աէրօպլանով թռաւ 25 րօպէ 10—15 մետր բարձրութեան վրա։

ՍՈՒՄԻ։ Ութ զինված կողոպտիչներ հէկինի շաքարի գործարանի գրասենեակից յափշտակեցին 4,000 ր.։ Վիրաւորված է ծառայողը։

Ճիշդ ժամը 5-ին Կլէվանում այրվեցին Օրժէվի սղոցագործարանները. Վնասները 200 հազար րուբլու են։

ՄԱՆՋՈՒՐԻԱ։ Եկան հակաժանտախտային ձեռնարկութիւնները ղեկավարելու համար երկաթուղու կառավարիչը և գլխաւոր բժիշկը։ Հաստատվեց ժանտախտային կայան։

ՓԱՐԻԶ։ Մեծ աջողութեամբ աւարտեց վէլիկօրուս Անդրէևը իր ներկայացումները։

Ժամ. Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմեռային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ արագ № 2 գնացքը՝ 9 ժ. 28 ր. առաւ., Գանձակ է հասնում 2 ժ. 38 ր. ցեր., Եվլախ՝ 4 ժ. 18 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 12 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 59 ր. գիշ., Բագու՝ 11 ժ. 26 ր. գիշ.։ Մարդատար № 6 գնացքը՝ 3 ժ. 35 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 56 ր. երեկ., Եվլախ՝ 12 ժ. 7 ր. գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 49 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 13 ր. առաւօտ., Բագու՝ 9 ժ. 7 ր. առաւ.։ Փօստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 25 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 47 ր. գիշ., Եվլախ՝ 7 ժ. 3 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 12 ժ. 11 ր. ցեր., Բալաջարի՝ 3 ժ. 53 ր. ցեր., Բագու՝ 5 ժ. 21 ր. երեկ.։ Խառն գնացքը՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 4 ժ. 18 ր. գիշ., Գանձակ է հասնում 12 ժ. 48 ր. ցեր., Եվլախ՝ 4 ժ. ցեր. Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 39 ր. գիշ., Բալաջարի՝ 4 ժ. 31 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 22 ր. առաւօտեան։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ փօստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 41 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 41 ր. առ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 18 ր. ցեր., Երևան (առանձին գնացք Ուլուխանլուից յարմարեցված այս գնացքին)՝ 7 ժ. 11 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 21 ր. գիշ., Ջուլֆա՝ 1 ժ. 5 ր. գիշ.։ Մարդատար-ապրանքատար № $^{78}/_{79}$ գնացքը՝ 4 ժ. 33 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 31 ր. գիշ., Էջմիածին կայար. 9 ժ. 3 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 34 ր. առ., և սրանից դէնը այլևս չէ գնում։ Խառն գնացք IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան № $^{108}/_{109}$՝ 5 ժ. 48 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 7 ժ. 20 ր. երեկ., Էջմիածին կայարան՝ 1 ժ. 30 ր. գիշ., առանց Երևան մտնելու, Նախիջևան՝ 9 ժ. 49 ր. առաւ., Ջուլֆա՝ 11 ժ. 58 ր. ցերեկ.։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5 գնացքը՝ 8 ժ. 10 ր. առաւ., Միխայլօվօ է հասնում 12 ժ. 18 ր. ցեր., Բաթում՝ 9 ժ. 20 ր. երեկ.։ Փօստատար № 3 գնացքը՝ 2 ժ. 9 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 18 ր. երեկ., Բաթում՝ 4 ժ. 28 ր. գիշ.։ Մարդատար № 7 գնացքը՝ 11 ժ. 53 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. 53 ր. գիշ., Բաթում՝ 1 ժ. 26 ր. ցեր.։ Խառն գնացք № 107 ըստ հարկի կարևորութեան՝ 1 ժ. 5 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 6 ժ. 54 ր. առաւ., Բաթում՝ 8 ժ. 33 ր. երեկ.։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^{9}/_{66}$ գնացքը՝ 3 ժ. 28 ր. ցեր., Գօրի է հասնում 6 ժ. 8 ր. երեկ., Միխայլօվօ՝ 7 ժ. 43 ր. երեկ., Բօրժօմ 9 ժ. 8 ր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ մարդատար № 5 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւօտեան։ Փօստատար № 3՝ 1 ժ. 9 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 55 ր. գիշ., որ այլևս դէնը չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 12 ժ. 3 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ մարդատար № 6 գնացքը՝ 2 ժ. 46 ր. ցերեկ.։ Փօստատար № 4 գնացքը՝ 9 ժ. 25 ր. գիշ.։ Մարդատար № 8 գնացքը՝ 8 ժ. 45 ր. առաւ., որ դէնը այլ ևս չէ գնում։ Խառն գնացքը IV կարգի վագոններով 3 ժ. 16 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ փօստատար № $^{72}/_{73}$ գնացքը՝ 6 ժ. 36 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ № $^{80}/_{81}$ գնացքը՝ 7 ժ. 1 ր. առաւ.։ Խառն գնացքը IV կարգի վագոններով՝ 10 ժ. երեկ.։

ԲՈՐԺՕՄԻՑ՝ մարդատար № $^{61}/_{10}$ գնացքը՝ 7 ժ. 35 ր առաւօտ.։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Արագ գնացքները (№ 2՝ Թիֆլիս-Բագու և № 1՝ Բագու-Թիֆլիս) առանց փոփոխելու գնում են մինչև Ռօստօվ և յետ դառնում, անպատճառ մտնելով Բագու՝ ամբողջ կազմով և բոլոր տեղերը պլաց-կարտով են։ Այս գնացքների մէջ կայ Միջազգային Ընկերութեան մի միքստ I/II կարգի վագօն, որ առանց իջնելու հաղորդակցում է Թիֆլիս-Բագու-Մօսկվա՝ աւելացված վճարով (1000 վերստը I կարգի վագօնում 8 ր., II կարգի՝ 6 ր.)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—11 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ. հ.
Ա. Մ. ՓՈՒԴԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Փ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—$12^1/_2$—$1^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$1^1/_2$—2 ժ. ներքին և երեխայոց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԿԻՆ ԲԺԻՇԿ Փ. Ս. ՋԻԼԲԵՐՇԱՑ—6—$6^1/_2$ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Հրաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
103. 0—110

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի սեփ. կլինիկայից՝ Պարիզում։
Ընդունելութիւն (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39.
(ա. օ.) 1179. 100—3

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր { 10—11 ժ. առ. (երեխաների)
5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(Ե.Հ.Կ.) 909. 100—32

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
Մէդիցինայի ֆէլդշէր Ա. Եսայեանի
ՏՂԱՄԱՐԴԻ ՏՐԻՊԵՐԸ
(սուսոնակ)
ԵՒ ՆՐԱ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
նկարներով, գինը 20 կօպ.։ Գիրքը անհրաժեշտ է բոլոր տղամարդկանց համար. պարունակում է բազմաթիւ խորհուրդներ և նորագոյն բէյէզաներ սուսոնակից ընդմիշտ բժշկվելու համար։ Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Սէմէօնովսկայա № 9. Գումարով (100-ից ոչ պակաս) հեղինակը անում է 40% զեղչ։ Ապառիկ պահանջները չեն կատարվի։
(օ. մ.) 1170. 5—4

Դարաչիչագի և Նոր-Բայազէտի շրջանի հայոց ծխական դպրոցների համար պէտք են միջնակարգ կրթութեամբ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ
Ցանկացողները դիմեն՝ Эривань, Армянская Духовная Семинарія, Тиграну Рашмаджяну.

ԿՈՐՋԵՆ ՈՍԿԵ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԸ! ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!



Տղամարդ. համար նոր ձևի տափակ ժամաց. ամեր. խիկական ոսկուց, բաց, շքեղ գրաւիւրով, «Prima America» մարկայով. այդ ժամաց. մասնագէտը նոյնիսկ չ՝ կարող զանազանել 56 յարգի իսկական ոսկէ ժամացոյցից։ Բացի շքեղ լինելուց՝ Prima America» ժամացոյցը շվէյցար. ամենալաւ շինուածքով է, ժընէվեան յայտնի ֆաբրիկայի գործ։ Լարում է կոճակ՝ 40 ժ. մի անգամ—«Remontoir» մինչև րօպէները ուղղված ընթացքով, 6 տար. գրաւոր երաշխաւորութեամբ։ Գինը առաջ 12 ր. էր, այժմ միայն 2 ր. 90 կ., 2 հատը 5 ր. 40 կ.։ Այդ ձևի խուլ ժամաց.—4 ռուբ.։ Մեր ֆիրմայի արտադրութիւնները տարածելու համար՝ մենք կցում ենք իւրաքանչիւր ժամաց. իբրև պրէմիա ձրի՝ 1) Շքեղ շղթայ նոյն ոսկուց. 2) ԲՐԵԼՕԿ ՆՈՐՈՒԹԻՒՆ. - Աւտոմատիկ սինեմատօգրաֆ հետաքրքր. տեսարաններով, կամ թէ 84% արծաթից, ոսկեզօծ. 3) Դ ր Կօխի ծխափող ապպարատ՝ անվնաս ծխելու պապիրօս կամ սիգար. 4) Այծեմաշկի քսակ ժամաց. փչանալուց պահ. համար։ Պատուէրներն ուղարկում ենք վերադիր վճ. և առանց կա՛ նախավճ.։ Հասցէն՝ ВАРШАВА М.—Складъ часовъ Т-во «Милано», Дикая ул. № 3. 1—4 ժամաց. համար ճանապարհածախսը հաշւվում է 50 կ.։ Ով տեսնէ այդ ժամաց. նա կը հաւատայ, որ նրանք իսկական ոսկուց են։ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. - Կանացի բաց ժամաց. նոյն մետաղից՝ կանացի կօմպլէկտով՝ 3 ր. 90 կ.։ Կանացի այդ ձևի ժամացոյց «Doubleor»—7 ր.։ Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն։
(Ե.) (B. 73379) 1158. 2-2

Թիֆլիսի գրասենեակը
յայտնում է պ. պ. գնողներին, որ բացված է ՇԱՔԱՐԻ ՎԱՃԱՌՔ
Խարկովեան Շաքարո-Ռաֆինադ Գործարանի Ընկերութեան
Հասցէն. Тифлисъ, Фрейлинская, д. № 3. Телеф. 567. А. Г. СНѢЖКОВЪ.
Պահեստը՝ Վելիամինովսկայա փող. № 12.
(օ. մ.) 1072. 10—5

ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄԵԾ-ՈՍԿԷ ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ
ԴԵՐՁԱԿ №№ ԳԵՐՇՕՎ
Գօլովինսկի պրօսպեկտ, տ. Առամեանցի № 23, «Բօյարսկի» հիւրանոցի ներքևը։
Պատիւ ունեմ յայտնելու ի տեղեկութիւն ինձ պատուէր տուողների, որ ես վերադարձել եմ արտասահմանից՝ բերելով հետս մեծաքանակ ապրանք։ Ընդունում եմ քաղաքացիական, զինուորական, աշակերտական և բոլոր պաշտօնական հիմնարկութիւններում պահանջվող զգեստների պատուէրներ, կարելու սէզօնի վերջին տարազով։ Ունեմ ընտիր կտորեղէններ՝ արտասահմանեան և ռուսական, որոնք աչքի են ընկնում իրանց ամրութեամբ, գործնականութեամբ և շքեղութեամբ։ Ապրանքի յատկութեան և գների կողմից կարող եմ մրցել ամենքի հետ, ինչու որ ապրանքը գնած ունեմ առաջին ձեռքից։ Ունեմ լաւ ձևող և կարողներ։ Պատուէրները կատարվում են իմ անձնական հսկողութեան ներքոյ, առանց ուշացնելու և միանգամայն չափաւոր գներով։
Օֆիցէրներին և կառավարչական հիմնարկութիւններում ծառայողներին անվում է զեղչ և տրվում է մաս-մաս վճարելու հնարաւորութիւն։
Յարգանօք՝ ԳԵՐՇՕՎ
(ա. օ.) 1140. 10—5

ՀԻՊՆՈՏԻԶՄ
ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԷՔ ՀԻՊՆՈԶԱՑՆԵԼ
Հիպնոտիզմը բնական ձիրք չէ։ Ամեն ոք կարող է տիրապետել այս խորհրդաւոր գիտութեան
◆
Հիպնօտիզմ սովորելը նոյնքան հեշտ է, որքան ուտել խմելը։
Հիպնօտիզմը կը բժշկէ հիւանդութիւններ և կուղղէ մոլորութիւններն ու վատ բարքերը։
Հիպնօզական ցուցահանդէսները չափազանց զուարճալի են։
Սովորեցէք հիպնօզացնելու արուեստը։ Մշակեցէք ձեր մէջ ներշնչելու զօրութիւնը և այդ աքանչելի ոյժի միջնորդութեամբ դարմանեցէք հիւանդութիւններ, տուէք ապշեցուցիչ ցուցահանդէսներ թատրօններում կամ մասնաւոր սրահներում և դառէք պրօֆէսիօնալ հիպնօտիստ։
Սովորելու ծախքը շատ չնչին է։
Ստացէք իմ «Ինչպէս հիպնօտացնել» պատկերազարդ գրքոյկը, որը կը տայ ձեզ լիակատար բացատրութիւն հիպնօտիզմի, Մեսմերիզմի, Հոգեբուժութեան, Ներշնչման, Հոգետեսութեան և Տելեպաթիի մասին։ Այս գրքոյկն ստանալու համար պիտի ուղարկել 10 կոպէկի նամակադրոշմ ճանապարհածախքի համար։
ԳՐԵՑԷՔ ԱՅՍՕՐ։ Գրեցէք ձեր անունն ու հասցէն որոշ։
Դիմել հետևեալ հասցէով Америка. Haroutun Shekerjian. 3758 Indiana Ave. Chicago, Ill. U. S. A.
(Ե.Հ.) 689. 100—39

Լ. Լալէձի լաբօրատօրիայի Օրլէան քաղաքում (ՖՐԱՆՍԻԱ)
ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԷՇԱՆԻ
(Iodhyrine du d-r Deschamp)
ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ
ՇԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ
որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետևանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։
Բժշկապետ Դէշանի Եօդիրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։
Հեռացնում է չաղութիւնը աստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։
Արկղիկի գինը, որ պարունակում է 60 դեղահատներ, արժէ 4 ր. 25 կոպ.։
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕМБУРГЪ и К-о, Варшава, Журавья. 40.
(8,18,28) (В. 61952) 1084. 8—4

Типографія „Экономъ" Большая Ванская № 3.